

Աղբյուր. Նկարը արված են Խորհրդատուի կողմից դաշտային այցելությունների ժամանակ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ)

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Rev02

Դեկտեմբեր 2025

Մշակված է

**Վերակառուցման և
Չարգացման Եվրոպական
Բանկի**

և

**ՀՀ Տարածքային
Կառավարման և
Ենթակառուցվածքների
Նախարարության Զրային
Կոմիտեի համար**



www.atms.am

ՀԱՅԱՍՏԱՆ - ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի շրջակա միջավայրի վրա
և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ)

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Rev02

Խորհրդատվական ծառայությունների պայմանագիր № 2023.009567

Մշակված է

- Վերակառուցման և շարժացման Եվրոպական Բանկի համար
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը կից Ջրային Կոմիտեի համար

Մշակվել է



ԷՅ Թ ԷՄ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ (Հայաստան)

Տնօրեն: տգթ. Արտակ Տեր-Թորոսյան
ՀՀ ք. Երևան, Գրիբոյեդովի փող. 112, 1
Հեռ.՝ +37499 109495
Էլ.փոստ՝ artak.ter-torosyan@atms.am
www.atms.am

և



Էկոլայն Ինթերնեշնլ ՍՊԸ (Բուլղարիա)

Տնօրեն՝ տգթ. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու
Հեռ.՝ +380 951 100 727, + 359 876 63 0522
Էլ.փոստ՝ mgachechiladze@ecoline-int.org
www.ecoline-int.org

Կողմից

Փաստաթղթի մշակում և հրապարակում

Տարբերակ	Կարգավիճակ	Մշակեց	Վերանայեց	Հրապարակեց	Հրապարակման ամսաթիվը
Rev01	Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի ԲՍԿՊ-ի առաջին նախագիծ	Ա.Տեր-Թորոսյան		Ա.Տեր-Թորոսյան	16.12.2025
Rev02	Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի ԲՍԿՊ-ի ավարտական նախագիծ		Ա.Տեր-Թորոսյան	Ա.Տեր-Թորոսյան	28.12.2025

© ATMS Solutions Ltd., 2025
Բոլոր իրավունքները պահպանված են

Պատասխանատվության շրջանակը

Սույն Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿԴ) մշակվել է Լիճքի ջրամբարի կառուցման ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) շրջանակներում: Այն նախատեսված է շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման միջոցառումների իրականացմանը ուղղորդելու համար Ծրագրի նախագծման (նախակառուցման), կառուցման և շահագործման փուլերում համապատասխան կիրառելի ազգային կանոնակարգերին և միջազգային լավագույն փորձին:

Սույն ԲՍԿԴ-ում ներկայացված տեղեկատվությունը հիմնված է մշակման պահին առկա տվյալների վրա և կարող է վերանայվել Ծրագրի պայմանների փոփոխությանը զուգընթաց:

Չնայած սույն փաստաթղթի ճշգրտությունն ու ամբողջականությունն ապահովելու համար Խորհրդատուն գործադրել է հնարավոր բոլոր ջանքերը, նա որևէ երաշխիք չի տալիս տեղեկատվության հուսալիության կամ որևէ կոնկրետ նպատակին պիտանիության վերաբերյալ: Սույն ԲՍԿԴ-ն չի հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն և չպետք է դիտարկվի որպես օրենսդրական պարտավորությունների կատարման այլընտրանք:

Սույն ԲՍԿԴ-ում նշված մեղմացնող միջոցառումների, մշտադիտարկման գործողությունների և շահագրգիռ կողմերի ներգրավման ռազմավարությունների իրականացման պատասխանատվությունը կրում են բացառապես Ծրագրի պատվիրատուն և նրա կապալառուները: Սույն փաստաթղթի ցանկացած օգտագործում երրորդ կողմերի կողմից կատարվում է նրանց սեփական ռիսկով, և Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում նման օգտագործումից բխող որևէ հետևանքի համար:

Հապահումների ցանկ

ԿՄՊ	- Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան
ԿԿՊ	- Կենսաբազմազանության Կառավարման Պլան
ԿԲՍԿՊ	- Կառուցման Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԿԿ	- Կրիտիկական Կենսամիջավայր
ՓԲԸ	- Բակ Բաժնետիրական Ընկերություն
ՎՉԵԲ	- Վերականգնման և Չարգացման Եվրոպական Բանկ
ՇՄԱԳ	- Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ԱԻԱՊ	- Արտակարգ Իրավիճակների Արձագանքման Պլան
ԲՍՄՊ	- Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ՇՄՍԱԳ	- Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատում
ԳՍԱԱ	- Բնապահպանական, Սոցիալական, Առողջապահական և Անվտանգության
ԲՍԿՊ	- Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԲՍՄՊ	- Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ
ԲՍԶ	- Բնապահպանական և Սոցիալական Զաղաքականություն
ԵՄ	- Եվրոպական Միություն
ԲԱՍ	- Բնապահպանական և Սոցիալական
ԳԲՈ	- Գենդերային Բռնություն և Ոտնձգություն
ՋԳ	- Ջերմոցային Գազեր
ԼՍԳ	- լավագույն Միջազգային Գործելակերպ
ՄՇԿՊ	- Մշակութային Ժառանգության Կառավարման Պլան
ՎՆԿՊ	- Վտանգավոր Նյութերի Կառավարման Պլան
ՇՄՆ	- Շրջակա Միջավայրի Նախարարություն
ՆԱՏԱ	- Նյութերի Անվտանգության Տվյալների Անձնագիր
ՏԿԵՆ	- Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն
ԱԱԱՊ	- Աշխատանքի Անվտանգություն և Առողջության Պահպանում
ԱԱԱՊԿՊ	- Աշխատանքի Անվտանգության և Առողջության Պահպանման Կառավարման Պլան
ՀՀԿ	- ՀՀ Կառավարություն
ԾԱԱ	- Ծրագրի Ազդեցության Ենթարկված Անձ
ԱԿՀ	- Առաջնահերթ Կենսաբազմազանության Հատկանիշներ
ԾԻԳ	- Ծրագրի Իրականացման Գործակալություն
ԱՊՄ	- Անհատական Պաշտպանության Միջոցներ
ԻՊ	- Իրագործման Պահանջ
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ՀՀՏՏ	- Հողային Հանույթի Տեղադրման Վայր
ՀՀԿՄ	- Հողային Հանույթի Կառավարման Պլան
ԱԿԿՊ	- Արտահոսքերի Կանխարգելման և Կառավարման Պլան
ՏԲԲՍԿՊ	- Տարածքին Բնորոշ Բնապահպանական և Սոցիալական Կառավարման և Մշտադիտարկման Պլան
ԹՍԱ	- Թույլատրելի Սահմանային Արժեք
ԲԿՊ	- Բուսահողի Կառավարման Պլան
ՏԱ	- Տեխնիկական Առաջադրանք
ՋՕԸ	- ՀՀ Ջրօգտագործողների Ընկերություն
ԹԿՊ	- Թափոնների Կառավարման Պլան

Բովանդակություն

1. Ներածություն	6
2. Նպատակը և շրջանակը.....	6
3. Ծրագրի նկարագիրը	7
4. Իրավական և կարգավորող շրջանակը	10
4.1 Կիրառելի է իրավական և կարգավորող պահանջները	10
4.2 Բնապահպանական չափանիշներ և նորմեր	14
5. Դերերը և պատասխանատվությունը.....	16
5.1 ՀՀ Ջրային կոմիտե (ՀՀ ՋԿ)	16
5.2 Վերահսկող ինժեներ.....	17
5.3 Կառուցման կապալառու	17
5.4 ՎՋԵԲ	18
5.5 Ծրագրի Իրականացման Գործակալություն (ԾԻԳ)	18
5.6 «Ջրառ» ՓԲԸ - Ջրամբարների օպերատոր	18
5.7 Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ	18
6. Բնապահպանական և սոցիալական կառավարումը Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում	19
6.1 Ծրագրի կենսացիկլերը.....	19
6.2 Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ.....	20
7. Բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումներ	22

1. Ներածություն

Եվրոպական Միության (ԵՄ) «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. Արևելյան գործընկերության գերակայությունները 2020 թվականից հետո» նախաձեռնության շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել 17 ջրամբար, ինչը ուղղված է երկրում ջրային և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Վերակառուցման և շարժացման Եվրոպական Բանկը («ՎԶԵԲ» կամ «Բանկ») դիտարկում է ՀՀ կառավարությանը վարկ տրամադրելու հնարավորությունը՝ Հայաստանի տարբեր մարզերում հինգ ջրամբարների կառուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու համար: Դրանք են՝

- Քասախի ջրամբար Արագածոտնի մարզում¹,
- Լիճքի ջրամբար Սյունիքի մարզում,
- Ելփինի ջրամբար Վայոց ձորի մարզում,
- Արթիկի ջրամբար Շիրակի մարզում,
- Աստղածորի ջրամբար Գեղարքունիքի մարզում:

ՎԶԵԲ-ը այս Ծրագիրը դասակարգել է որպես «Ա» կատեգորիայի՝ համաձայն իր Բնապահպանական և Սոցիալական Զաղաքականության («ԲՍԶ») (2019), քանի որ այն կարող է զգալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ առաջացնել: Սա նշանակում է, որ պետք է մշակվի Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) համապարփակ հաշվետվություն և դրան կից փաստաթղթեր, որոնց հաջորդելու է դրանց առնվազն 120 օրյա հանրային հրապարակումը:

Վերը թվարկված հինգ ջրամբարներից մեկը նախատեսվում է կառուցել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք գյուղի վարչական սահմաններում: Լիճքի ջրամբարը նախագծված է 3.76 մլն. մ³ տարողությամբ և կսնվի Մեղրի գետի Լիճք (Արևիկ) վտակից: Այն նախատեսված է ոռոգման ջրով ապահովել Մեղրի, Ագարակ, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լեհվազ, Վարդանիձոր և Կարճևան բնակավայրերի մոտ 1,510.8 հա գյուղատնտեսական հողատարածքների համար:

Բանկը ներգրավել է Խորհրդատուի²՝ հինգ ջրամբարների կառուցման ազգային Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման («ՇՄՍԱԳ») հաշվետվությունները ՎԶԵԲ-ի ԲՍԶ պահանջներին համապատասխանեցնելու և դրանց առնչվող Բնապահպանական և Սոցիալական (ԲևՍ) փաստաթղթերը մշակելու համար, ներառյալ սույն Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿԴ)՝ Ծրագրի հատուկ ազդեցություններին, օգուտներին և հնարավորություններին համահունչ:

2. Նպատակը և շրջանակը

Սույն ԲՍԿԴ-ն առանձին փաստաթուղթ է, որը կապված է Ծրագրի ՇՄՍԱԳ հաշվետվության հետ: Այն ներառում է մեղմացման և կառավարման միջոցառումների մի շարք, դրանց արդյունավետ իրականացման չափանիշներ, ֆինանսավորման աղբյուրներ, կանխատեսվող նպատակներ և ինստիտուցիոնալ կարգավորումներ, որոնք պետք է ձեռնարկվեն Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում՝ կանխելու, նվազեցնելու և փոխհատուցելու համար շրջակա միջավայրի և սոցիալական բացասական ազդեցությունները մինչև ընդունելի մակարդակ: ԲՍԿԴ-ն մշակվել է Բնապահպանական և Սոցիալական (ԲևՍ) գնահատման արդյունքների հիման վրա՝ ապահովելու, որ Ծրագիրը իրականացվի համապատասխան ազգային ԲևՍ ոլորտի օրենսդրության, ՎԶԵԲ-ի ԲՍԶ (2019), ԵՄ համապատասխան հրահանգների և Միջազգային Լավագույն Գործելակերպերին (ՍԼԳ) համապատասխան:

¹Նաև շրջան

²ATMS Solutions Ltd. (Հայաստան) և Ecoline International Ltd. (Բուլղարիա) ընկերություններից բաղկացած կոնսորցիում

ԲՍԿԴ-ն հիմնական փաստաթուղթ է, որը սահմանում է մշակութային ժառանգության (թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական), հողօգտագործման, արտակարգ իրավիճակների, համայնքային և աշխատանքային առողջության ու անվտանգության ռիսկերին վերաբերող ԲԼՍ պահանջներ, ինչպես նաև սահմանում է գործառնական ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող նշանակալի խնդիրները կառավարելու համար:

Սույն ԲՍԿԴ-ը՝

- Սահմանում է Ծրագրին առնչվող օրենսդրական և կարգավորող շրջանակը,
- Ապահովում է ՎՉԵԲ-ի պահանջների բավարարումը,
- Ուրվագծում է կազմակերպչական կառուցվածքը, ԲԼՍ կառավարմանը վերաբերող հիմնական դերերը և պարտականությունները,
- Փաստաթղթավորում է ՇՄՍԱԳ ուսումնասիրությունների միջոցով բացահայտված ԲԼՍ ռիսկերի և ազդեցությունների կառավարման մոտեցումները: Կառավարումը ենթադրում է բացասական ազդեցությունների խուսափում կամ սահմանափակում, ինչպես նաև Ծրագրի դրական ազդեցությունների (օգուտների) ուժեղացում:

Սույն ԲՍԿԴ-ի շրջանակը ներառում է Ծրագրի նախագծման (նախակառուցման), կառուցման և շահագործման փուլերը: Համապատասխանաբար, այն վերաբերում է կառուցման կապալառուին և նրա ենթակապալառուներին, մասնագիտացված ընկերություններին, որոնք ներգրավված են ԲՍԿԴ-ով պահանջվող հատուկ ուսումնասիրություններում, վերահսկող ինժեներին և Պատվիրատուին, որը ներկայացված է Տարածքային Կառավարման և ենթակառուցվածքների Նախարարության (ՏԿԵՆ) ներքո գործող ՀՀ Ջրային Հոմիտեով (ՀՀ ՋԿ): Այն նաև ներառում է Ծրագրի իրականացման Գործակալությունը (ԾԻԳ), որը ներգրավված է Ծրագրի նախագծման և կառուցման փուլերում, ինչպես նաև «Ջրառ» ՓԲԸ-ն, որը պատասխանատու է ավարտված ջրամբարի շահագործման և պահպանման համար:

3. Ծրագրի նկարագիրը

Լիճք ջրամբարը նախագծված է 3.76 մլն. մ³ տարողությամբ և սնվելու է Մեղրի գետի Լիճք (Արևիկ) վտակից: Այն նախատեսված է ոռոգման ջուր տրամադրելու մոտավորապես 1,510.8 հա գյուղատնտեսական հողատարածքների համար՝ ընդգրկելով Մեղրի, Ագարակ, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լեհվազ, Վարդանիձոր և Կարճևան բնակավայրերը:


Ջրամբարի տեղամասը գտնվում է մոտավորապես 1.5 կմ հարավ-արևելք՝ Լիճք գյուղական բնակավայրից ներքև հոսանքով: Լիճք գյուղից մինչև Մեղրի քաղաք հեռավորությունը կազմում է 20 կմ: Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապանը գտնվում է Ծրագրի տարածքից մոտ 52 կմ հեռավորության վրա: Ծրագրի տարածքից մինչև Հայաստանի մայրաքաղաք Երևան հեռավորությունը կազմում է մոտ 350 կմ:

Լիճքի ջրամբարի հիդրավիկ հանգույցը կզբաղեցնի 27.1 հա հողատարածք, սակայն Ծրագրի նախագծման ուսումնասիրության ընթացքում ջրամբարի շուրջը սահմանվել է 80 հա պաշտպանիչ (բուժերային) գոտի (**Նկար 1**):

Ջրամբարի հիդրատեխնիկական հանգույցը ներառում է հետևյալ բաղադրիչներ՝

1. Պատվար,
2. Շինարարական ջրհեռ,
3. Ոռոգման ջրանցք,
4. Վթարային ջրհեռ,
5. Սպասարկման օբյեկտներ և կառույցներ:

Նկար 1. Ջրամբարի հիդրատեխնիկական հանգույցի կողմից զբաղեցված տարածքը և պաշտպանական (բուժերային) գոտին



Պատվարի մարմինը կառուցվելու է տեղում առկա շինարարական նյութերով, մասնավորապես՝ ճալքարա-կոպճային խառնուրդով ձևավորված պրիզմաներով: Ֆիլտրացիոն կորուստները կանխելու համար նախատեսվում է կենտրոնական ավազակավային միջուկ: Պատվարը կունենա առավելագույնը 61.5 մ բարձրություն: Վերին լանջը նախագծված է 1:3.0 հարաբերակցությամբ, իսկ ստորին լանջը՝ 1:2.75: Շարավանդի լայնությունը կազմում է 8.0 մ, իսկ պատվարի երկարությունը 1607.5 մ բարձրության վրա՝ 367.0 մ:

Ոռոգման նպատակով նախատեսվում է տեղադրել պողպատե խողովակ՝ 373.0 մ երկարությամբ և Ø820×8մմ տրամագծով, որը կտեղադրվի հիմքային սրահում՝ ջրամբարից ջուրը $Q=1.0\text{մ}^3/\text{վ}$ արագությամբ վերցնելու և սպառողներին մատակարարելու համար: Ջուրը ջրամբարից կվերցվի ջրառային կառույցի միջոցով, որը կկառուցվի շինարարական ջրատարի սկզբում: Ջրառի վրա կտեղադրվի մետաղական ցանց՝ խոչընդոտելու համար աղբի մուտքը: Նվազագույն ջրառի մակարդակը սահմանված է 1560.0մ բարձրության վրա ծովի մակարդակից, որը համապատասխանում է ջրամբարի մեռյալ ծավալի մակարդակին:

Բացի այդ, նախատեսվում է վթարային ջրհոսք՝ Ø1020×10 մմ պողպատե խողովակով: Շինարարական ջրհեռի վերջում նախատեսվում է կառուցել փականային շենք վերը նշված խողովակաշարերի՝ ելքերի կառավարման համար: Այս երկու խողովակները կօգտագործվեն նաև Էկոլոգիական թողքը կարգավորելու համար՝ համաձայն հիդրոլոգիայի բաժնում ներկայացված սահմանների:

Ջրամբարի պատվարի կառուցման համար անհրաժեշտ ավազակավն ու խիճը կփորվեն նախատեսվող ջրամբարի տարածքից: Զարե լցանյութը կտրամադրվի Ծրագրի տարածքից մոտ 5 կմ հեռավորության վրա գտնվող հանքավայրերից: Այս աղբյուրները սկզբնապես ուսումնասիրվել են Խորհրդային Միության տարիներին և համապատասխան տվյալները ստացվել են նախորդ ուսումնասիրություններից:

Շինարարական մեքենաներն ու սարքավորումները Ծրագրի տարածք հիմնականում կմտնեն Մ1 «Երևան - Իրանի սահման» մայրուղով: Մ1 մայրուղուց շինհրապարակ մուտքը, ինչպես նաև

շինհրապարակի, քարհանքի և ջրամբարի տարբեր բաղադրիչների միջև կապը կհեշտացվի հողային ճանապարհներով:

Ծրագրի կարիքները բավարարելու համար կստեղծվեն երկու շինարարական ճամբարներ, որոնցից յուրաքանչյուրը կահավորված կլինի անհրաժեշտ կարողություններով և սարքավորումներով: Առաջին ճամբարը կաջակցի պատվարի, ջրամբարի մարմնի, հարակից ենթակառուցվածքների և մուտքի ճանապարհների կառուցմանը: Երկրորդ ճամբարը կծառայի քարհանքին: Եթե շինարարական ճամբարի նշանակված տարածքները բավարար չեն բետոնախառնիչ տեղավորելու համար, բետոնը կմատակարարվի մոտակա կենտրոնացված բետոնի գործարանից, որը համալրված կլինի չափաբաժնային կշռման համակարգերով և կտեղափոխվի Ծրագրի տարածք: Այս պայմանավորվածությունները հետագայում կքննարկվեն ընտրված կառուցման կապալառուի և պատվիրատուի միջև:

Ծրագրի տարածքից հեռացված հողի բերրի շերտի ժամանակավոր պահեստարանը կկազմակերպվի շինհրապարակում:

Ինչպես նշվել է վերևում, ջրամբարի ավազանից հանվելիք խորքերի (ավազակավ, խիճ, գլորաքար, տուֆային բրեկչիա և այլ նյութեր) մոտ 85%-ը կօգտագործվի պատվարի և ջրամբարի մարմնի կառուցման համար: Մնացածը կօգտագործվի քարե հանքավայրի վերականգնման համար: Հետևաբար, շինարարության ընթացքում մշտական հողային մնացորդների տեղաբաշխման տարածքներ չեն պահանջվի: Սակայն ակնկալվում է, որ փորված հանույթը ժամանակավորապես կպահեստավորվեն շինհրապարակի տարածքում՝ օգտագործումից առաջ: Այս ժամանակավոր հողային զանգվածի պահման վայրերի կոնկրետ տեղակայությունները նախագծային փաստաթղթերում սահմանված չեն և կներկայացվեն կապալառույի կողմից՝ շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ:

Քարքարոտ հողերի համար որպես նախնական թուլացման մեթոդ առաջարկվում են երկու տարբերակ՝

- Քարի պայթեցում՝ հորատանցքներում կամ պայթեցման անցքերում տեղադրված լիցքերով (քարայրի մեթոդ),
- Հիդրավլիկ մուրճի օգտագործում՝ ջրամբարի մարմնի և պատվարի փորման համար:

Պայթեցումները պետք է իրականացվեն օրվա ֆիքսված ժամերին՝ նախընտրելի է կեսօրից հետո կամ աշխատանքային հերթափոխի ավարտին: Պայթեցումների ժամանակացույցը պետք է նախապես հաղորդվի շրջակա բնակչությանը:

Շինարարական աշխատանքների տևողությունը որոշվել է հիմնական հողային և փորման աշխատանքների ծավալի և աշխատանքային ինտենսիվության հիման վրա, առաջադրանքների ռացիոնալ հաջորդականության և գործառնական սահմանափակումների համապարփակ գնահատման հիման վրա՝ համաձայն ՍՆԻՊ №1.04.03-85 «Ձեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը»: Շինարարության տևողությունը որոշվել է շինարարական աշխատանքների ժամանակացույցի համաձայն և կազմում է 45 ամիս կամ 1125³ օր:

³ՀՀ Սյունիքի մարզում Լիճք ջրամբարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ընդհանուր բացատրագիր, 2024թ.

4. Իրավական և կարգավորող շրջանակը

4.1 Կիրառելի է իրավական և կարգավորող պահանջները

ՇՄՍԱԳ ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվել հետևյալ իրավական և կարգավորող պահանջները, որոնք համապատասխանաբար ծառայել են որպես չափանիշներ սույն ԲՍԿՊ-ում առաջարկվող կառավարման միջոցառումների ձևակերպման համար՝

- 1) Կիրառելի ազգային բնապահպանական և սոցիալական ոլորտի օրենքներ և կանոնակարգեր,
- 2) ՀՀ կողմից վավերացված կիրառելի միջազգային կոնվենցիաներ,
- 3) Կիրառելի ԵՄ օրենսդրություն,
- 4) ՎՁԵԲ ԲՍԶ և Իրագործման Պահանջներ (ԻՊ),

Ծրագրի համար կիրառելի ԲԼՍ իրավական և կարգավորող ակտերը մանրամասն նկարագրված են ՇՄՍԱԳ հաշվետվության Բաժին 4-ում և ներկայացված են ստորև.

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014, վերանայվել է 2023թ.-ին),
 - Հանրության ծանուցման և հանրային քննարկումների ընթացակարգը սահմանված է ՀՀ Կառավարության 19.11.2014թ.-ի №1325-Ն որոշմամբ,
 - Հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 09.04.2015թ.-ի №399-Ն որոշմամբ,
 - Ռազմավարական Էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատված են ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 29.10.2024թ.-ի №438-Ն հրամանով:
- ՀՀ Ջրային Օրենսգիրք (2002թ.),
 - Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակը վերահսկվում է ԵՄ Ջրային շրջանակային հրահանգի սկզբունքներին համապատասխան, որը հաստատվել է ՀՀ Կառավարության 27.01.2011թ.-ի №75-Ն որոշմամբ,
 - Ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման, կասեցման, ուժի կորցրած ճանաչելու, դադարեցման կարգերը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը, հորատանցքի անձնագրերի, հորատանցքի նախագծային երկրաբանա-տեխնիկական կտրվածքի ձևերը հաստատված են ՀՀ Կառավարության 03.08.2023թ.-ի №1332-Ն որոշմամբ,
- Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենք (2006թ.),
- Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին ՀՀ օրենք (2005թ.),
- ՀՀ Հողային Օրենսգիրք (2001թ.),
 - Հողի բերրի շերտի օգտագործման կարգ հաստատված ՀՀ Կառավարության 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշմամբ,
 - Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին ՀՀ Կառավարության 02.11.2017թ.-ի №1404-Ն որոշմամբ,
 - Հողագործնախարարի կարգը սահմանելու մասին ՀՀ Կառավարության 10.05.2019թ.-ի №572-Ն որոշմամբ,
- Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին ՀՀ օրենք (2008),
- Թափոնների մասին ՀՀ օրենք (2004թ.),

- Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք (2006թ.),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994թ., վերանայված է 2022թ.-ին),
 - Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունները սահմանված են ՀՀ կառավարության 02.02.2006թ.-ի №160-Ն որոշմամբ,
- Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք (1999թ.),
- Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք (2000թ.),
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատված է ՀՀ կառավարության 71-Ն որոշմամբ,
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատված է ՀՀ կառավարության 72-Ն որոշմամբ,
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006թ.),
- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք (1998թ.),
- Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» օրենքը (2009թ.),
 - ՀՀ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները սահմանելու և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության №310-Ա որոշումով,
 - ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի գրանցման ու կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության №36-Ն որոշմամբ,
 - ՀՀ մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության №241-Ն որոշմամբ,
- ՀՀ Ընդերքի մասին Օրենսգիրք (2011թ.),
- ՀՀ Անտառային Օրենսգիրք (2005թ.),
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005թ.),
- Հանրային առողջապահության մասին ՀՀ օրենք (2024թ.),
- ՀՀ Աշխատանքային Օրենսգիրք (2004թ.),
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք (2013թ.),
- Հրդեհային անվտանգության մասին ՀՀ օրենք (2001թ.),
- Հրդեհային անվտանգության կանոնները հաստատված են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի №595-Ն հրամանով:

Հայաստանը ստորագրել/վավերացրել է մի շարք Ծրագրին առնչվող միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ, որոնք ներկայացված են **Աղյուսակ 1**-ում:

Աղյուսակ 4-1. ՀՀ կողմից վավերացված և Ծրագրին վերաբերվող միջազգային համաձայնագրերի ցանկը

Միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր	Նկարագիրը
«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես	ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:

Միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր	Նկարագիրը
ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար 1971)	
«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ, 1972)	ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
«Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն, 1979)	ՀՀ-ի կողմից վավերացվել է 2010թ.-ին:
«Եվրոպայի կենդանական աշխարհի և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979)	ՀՀ-ի կողմից վավերացվել է 2008թ.-ին:
«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենս, 2000)	Եվրոպայի խորհրդի լանդշաֆտների եվրոպական կոնվենցիան խթանում է լանդշաֆտների պահպանությունը, կառավարումը և պլանավորումը և կազմակերպում է միջազգային համագործակցություն լանդշաֆտային խնդիրների շուրջ:
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993թ.-ին:
Փարիզյան համաձայնագիր՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո	Հայաստանի կողմից վավերացվել է 2017թ.-ին:
ՄԱԿ-ի անապատեցման դեմ պայքարի կոնվենցիա (Փարիզ, 1994)	Հայաստանի կողմից վավերացվել է 1997թ.-ին:
ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ կյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա (2003)	Հայաստանի կողմից վավերացվել է 2006թ.-ին:
«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության	ՀՀ-ի կողմից վավերացվել է 2001թ.-ին:

Միջազգային կոնվենցիաներ և համաձայնագրեր	Նկարագիրը
մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս, 1998)	
Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (Էսպո 1991)	Վավերացվել է Հայաստանի կողմից 1997թ.-ին:
Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաներ	Հայաստանը վավերացրել է ԱՄԿ 29 կոնվենցիաներ, ներառյալ հետևյալ հիմնարար կոնվենցիաները:

Ծրագրին վերաբերող Եվրոպական Միության (ԵՄ) օրենսդրությունը ներառում է հետևյալ հրահանգները՝

- 1) 2011/92/EC հրահանգը, որը փոփոխվել է 2014/52/EC հրահանգով, որոշակի պետական և մասնավոր նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին (ՇՄԱԳ հրահանգ),
- 2) Արդյունաբերական արտանետումների մասին 2010/75/EC հրահանգ (համապարփակ աղտոտման կանխարգելում և վերահսկում) (Արդյունաբերական արտանետումների մասին հրահանգ),
- 3) Վայրի թռչունների պահպանության մասին 2009/147/EC հրահանգ (Թռչունների մասին հրահանգ),
- 4) Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/EEC հրահանգը բնական միջավայրերի և վայրի կենդանական ու բուսական աշխարհի պահպանության մասին (Կենսա-միջավայրերի մասին հրահանգ),
- 5) Ջրային քաղաքականության ոլորտում համայնքային գործողությունների շրջանակը սահմանող 2000/60/EC հրահանգ (Ջրային շրջանակային հրահանգ),
- 6) Թափոնների մասին 2008/98/EC հրահանգ (Թափոնների մասին շրջանակային հրահանգ),
- 7) 2003/10/EC հրահանգ՝ աշխատողների ֆիզիկական գործունեության (աղմուկ) առաջացող ռիսկերին ենթարկվելու վերաբերյալ առողջության և անվտանգության նվազագույն պահանջների մասին,
- 8) 2002/44/EC հրահանգ՝ ֆիզիկական գործունեության (թրթռում) առաջացող ռիսկերին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին:

Ծրագրին առնչվող հատուկ ԲևՍ պահանջները հետևյալն են՝

- ՎՉԵԲ-ի ենթադրատային բնապահպանական և սոցիալական ուղեցույցներ՝ կառուցում և շինարարական գործունեություն (2010),
- Միջազգային ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ընդհանուր ուղեցույց (2007),
- ICOLD տեղեկագիր 173 (2021) - Հիդրոէլեկտրակայանների և ջրամբարների համապարփակ շահագործում:
- ICOLD տեղեկագիր 96 (1994) - Պատվարներ և բնապահպանություն՝ ջրի որակ և կլիմա.
- ICOLD տեղեկագիր 86 (1992) - Պատվարներ և բնապահպանություն՝ սոցիալ տնտեսական ազդեցություններ:

ՎՁԵԲ-ը իր ԲԱՍ պահանջները ձևակերպել է ԲՍԲ-ում (2019): Ծրագրին կիրառելի ԻՊ-ը ներկայացված են ստորև՝

- ԻՊ 1. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատումը և կառավարումը:
- ԻՊ 2. Աշխատանք և աշխատանքային պայմանները:
- ԻՊ 3. Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, աղտոտման կանխարգելումը և վերահսկումը:
- ԻՊ 4. Առողջություն և աշխատանքի անվտանգությունը:
- ԻՊ 5. Հողի օտարումը, հողօգտագործման սահմանափակումները և հարկադիր տարաբնակեցումը:
- ԻՊ 6. Կենսաբազմազանության պահպանումը և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարումը:
- ԻՊ 8. Մշակութային ժառանգությունը:
- ԻՊ 10. Տեղեկատվության հրապարակումը և շահագրգիռ կողմերի ներգրավումը:

4.2 Բնապահպանական չափանիշներ և նորմեր

Ծրագրի տարածքում և դրա ազդակիր շրջակա միջավայրում ելակետային ֆիզիկական պայմանները որոշելու, ինչպես նաև կառուցման և շահագործման փուլերի ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումը ուղղորդելու համար կիրառվող բնապահպանական չափանիշներն ու նորմերը ամփոփված են **Աղյուսակներ 2-5**-ում:

ՀՀ բնակավայրերում մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները սահմանվում են ՀՀ կառավարության №160-Ն որոշմամբ և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) օդի որակի ուղեցույցներով (2021թ.-ի գլոբալ թարմացում)⁴ և ամփոփված են **Աղյուսակ 2**-ում:

Աղյուսակ 2. Օդի որակի ստանդարտները

№	Աղտոտող նյութ	Ազդեցության ժամանակահատված	Սահմանային Թույլատրելի Կոնցենտրացիա (ՍԹԿ), մգ/մ ³		
			ԱՀԿ		ՀՀ ստանդարտներ
			2005	2021	
1	PM2.5	24 ժամյա	0.025	0.015	0.035
		տարեկան		0.01	
		առավելագույն			0.16
2	PM10	24 ժամյա	0.05	0.045	0.06
		տարեկան	0.02	0.015	
		առավելագույն			0.3
3	Ծծմբի դիօքսիդ	1 ժամյա			
		24 ժամյա	0.02	0.04	0.05
		առավելագույն			0.5
4	Ազոտի երկօքսիդ	1 ժամյա			
		24 ժամյա		0.025	0.04
		տարեկան	0.04	0.01	
		առավելագույն			0.2
5	Ածխածնի օքսիդ	առավելագույն օրական 8 ժամյա			

⁴<https://www.who.int/publications/i/item/9789240034228>

	24 ժամյա		4.0	3.0
	առավելագույն			5.0

№2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով⁵, ԱՀԿ-ի համայնքային աղմուկի ուղեցույցներով (1999թ.)⁶ և ՄՖԿ-ի շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ընդհանուր ուղեցույցով (2007թ.)⁷ աղմուկի/ձայնի սահմանված համարժեք (միջին) և առավելագույն թույլատրելի մակարդակները ներկայացված են **Աղյուսակ 3**-ում:

Աղյուսակ 3. Աղմուկի թույլատրելի մակարդակները

№	Տարածքներ	Թույլատրելի մակարդակներ, դԲԱ		
		Ազգային		ՄՖԿ/ԱՀԿ
		համարժեք	առավելագույն	մեկ ժամին համարժեք ձայնի մակարդակ
1	Աշխատատեղ	80		85
2	Խանութներ, առևտրի սրահներ, օդանավակայանի և երկաթուղային կայարանների սպասասրահներ, հանրային ծառայություններ մատուցողների բեռնաթափման կետեր	60	75	
	Արդյունաբերական, առևտրային			70
3	Բնակելի շենքերի, կլինիկաների, ամբուլատորիաների, հանգստյան տների, ծերանոցների, հաշմանդամների տների, գրադարանների, մանկապարտեզների, դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների հարակից տարածքները	ցերեկ ⁸	55	70
		գիշեր ⁹	45	60
				55
				45

№2.2.4-009-06 «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմեր»-ով¹⁰ սահմանված թրթռման թույլատրելի արժեքները ամփոփված են **Աղյուսակ 4**-ում:

Աղյուսակ 4. Թրթռման արագացման թույլատրելի արժեքները

№	Ընդհանուր թրթռում	Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	
		մ/վ ²	դԲ
1	Տրանսպորտատեխնոլոգիական (2-րդ կարգ)	0.28	109
2	Տեխնոլոգիական (3-րդ կարգ, ա)	0.1	100
3	Տեխնոլոգիական (3-րդ կարգ, բ)	0.04	92
4	Տեխնոլոգիական (3-րդ կարգ, գ)	0.014	83
5	Բնակելի սենքեր, հիվանդասենյակներ	0.004	72

⁵<https://www.arlis.am/hy/acts/163246>

⁶<https://www.who.int/publications/i/item/a68672>

⁷<https://www.ifc.org/content/dam/ifc/doc/2000/2007-general-ehs-guidelines-en.pdf>

⁸07:00-ից 23:00

⁹23:00-ից 07:00

¹⁰<https://www.arlis.am/hy/acts/163276>

№2.1.7.003-10 «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններով¹¹ սահմանված հողում քիմիական տարրերի ՍԹԿ-երը բերված են **Աղյուսակ 5**-ում:

Աղյուսակ 5. Հողում քիմիական տարրերի ՍԹԿ-երը

№	Քիմիական տարրեր	Միավոր	ՍԹԿ հողում
1	Վանադիում	մգ/կգ	150
2	Քրոմ	մգ/կգ	6
3	Մանգան	մգ/կգ	1500
4	Կոբալտ	մգ/կգ	5
5	Նիկել	մգ/կգ	4
6	Պղինձ	մգ/կգ	3
7	Ցինկ	մգ/կգ	23
8	Արսեն	մգ/կգ	2
9	Անտիմոն	մգ/կգ	4.5
10	Կապար	մգ/կգ	32

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակը վերահսկվում է ԵՄ Ջրային շրջանակային հրահանգի սկզբունքներին համապատասխան, որն ընդունվել է ՀՀ կառավարության 27.01.2011թ.-ի հունվարի 27-ի №75-Ն որոշմամբ¹²: Մեղրի գետի ավազանում ջրի որակի չափանիշները սահմանված են Նույն որոշման Հավելված 25-ում:

5. Դերերը և պատասխանատվությունը

5.1 ՀՀ Ջրային կոմիտե (ՀՀ ՋԿ)

ՀՀ ՋԿ-ն (ԾԻԳ)՝ իրականացման մարմին է, որն ունի ընդհանուր պատասխանատվություն Ծրագրի և սույն ԲՍԿԴ-ի իրագործման համար: Այն նաև պատասխանատու է ՀՀ ԲԼՍ իրավական պահանջների համապատասխանության ապահովման և ՇՄՍԱԳ հաշվետվությունում սահմանված պարտավորությունների կատարման համար:

Չնայած ԲՍԿԴ պահանջների մեծ մասը կիրականացվի կառուցման կապալառուի և նրա ենթակապալառուների կողմից, ՀՀ ՋԿ-ն կպահպանի ընդհանուր պատասխանատվությունը Ծրագրի ԲԼՍ արդյունավետության համար: Բացի այդ, ՀՀ ՋԿ-ն (ԾԻԳ) պատասխանատու է Շահառուների Ներգրավման Պլանի (ՇՆՊ) և Կենսաբազմազանության Միջոցառումների Պլանի (ԿՄՊ)¹³, Մշակութային Ժառանգության Կառավարման Պլանի (ՄԿԿՊ) և Տարաբնակեցման Պլանի (ՏՊ) իրականացման համար:

ՀՀ ՋԿ-ում պետք է աշխատեն բնապահպանական և սոցիալական մասնագետներ, որոնք կվերահսկեն Ծրագրի շրջանակներում բոլոր գործառնությունների կատարումը, որոնք կապված են Բնապահպանական, Սոցիալական, Առողջապահական և Անվտանգության (ԲՍԱԱ) հարցերի հետ: Հատուկ ԲԼՍ ուսումնասիրությունների համար ՀՀ ՋԿ-ն կարող է ներգրավել մասնագիտացված կամ լիցենզավորված ընկերություններ և խորհրդատուներ՝ ըստ անհրաժեշտության:

¹¹<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=146741>

¹²<https://www.arlis.am/hy/acts/200962>

¹³ՇՄՍԱԳ հրապարակման փաթեթի մասը կազմող ՇՆՊ-ն և ԿՄՊ-ը ՇՄՍԱԳ խորհրդատուն մշակել է ՀՀ ՋԿ-ի անունից

5.2 Վերահսկող ինժեներ

Կառուցման փուլի ընթացքում Ծրագրի իրականացումը վերահսկելու և ԲՍԿՊ-ի ու Ծրագրի շինարարության հետ կապված այլ կառավարման պլանների ու ընթացակարգերի պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար պայմանագիր կկնքվի վերահսկող ինժեների հետ:

Պարտականությունները ներառում են մշտադիտարկման պլանի մշակումը և իրականացումը, գրառումների պահպանումը և Ծրագրի կառուցման կապալառուի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ ՀՀ ՋԿ-ին և ՎՋԵԲ-ին հաշվետվությունների ներկայացումը: Սա կներառի դիտարկված անհամապատասխանությունները, համապատասխան ուղղիչ գործողությունները և սահմանված ժամկետները, դերերն ու պատասխանատվությունները:

Վերահսկող ինժեները նաև անհրաժեշտության դեպքում կտրամադրի կարողությունների զարգացման աջակցություն և ուսուցում Կապալառուի ԲևՍ թիմին և պատասխանատու կլինի սույն ԲՍԿՊ-ի **Բաժին 6.2**-ում նշված կառավարման և մշտադիտարկման պլանների հաստատման համար:

Վերահսկող ինժեները պարտավոր կլինի նշանակել համապատասխան որակավորում ունեցող և փորձառու ԲՍԱԱ մասնագետների հետևյալ կոնկրետ պաշտոններում՝

- 1) Միջազգային և տեղական բնապահպանական մասնագետներ,
- 2) Միջազգային և տեղական աշխատանքային անվտանգության և առողջության պահպանման (ԱԱԱՊ) մասնագետներ,
- 3) Տեղական սոցիալական (ներառյալ գենդերային հարցերով) և տարաբնակեցման մասնագետ(ներ),
- 4) Տեղական հնագետ,
- 5) Կենսաբազմազանության (բուսական և կենդանական) մասնագետներ՝ միջազգային փորձով / վարկատուի պահանջների իմացությամբ:

5.3 Կառուցման կապալառու

Կառուցման կապալառուն, որը ընտրվելու է ՀՀ ՋԿ-ի մրցույթային գործընթացի միջոցով, կրում է Ծրագրի շինարարության ընդհանուր պատասխանատվությունը: Կապալառուն պետք է լիովին համապատասխանի սույն ԲՍԿՊ-ի և ՀՀ ՋԿ-ի այլ կառավարման պլանների պահանջներին:

Այն ներառում է սույն ԲՍԿՊ-ի **Բաժին 6.2**-ում նշված կառուցման փուլի ԲևՍ կառավարման պլանների մշակումը և այդ պլաններում նշված բոլոր բնապահպանական և սոցիալական կառավարման և մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացման ապահովումը շինարարական աշխատանքների ողջ ընթացքում:

Կապալառուն նաև պատասխանատվություն է կրում բոլոր ենթակապալառուների կողմից ԲևՍ կառավարման պլանների և ընթացակարգերի պահանջները ապահովելու համար:

Կառուցման կապալառուն պարտավոր կլինի նշանակել համապատասխան որակավորում ունեցող և փորձառու անձնակազմ հետևյալ ԲՍԱԱ պաշտոնների համար՝

- 1) Ծրագրի ղեկավար,
- 2) Բնապահպան մասնագետ,
- 3) Աշխատանքի անվտանգության և համայնքային առողջության մասնագետ(ներ),
- 4) Սոցիալական և տարաբնակեցման մասնագետ,
- 5) Մշակութային ժառանգության փորձագետ,

- 6) Համայնքային կապի պատասխանատուներ, որոնք պատասխանատու են ՇՆՊ-ի համապատասխան առաջադրանքների իրականացման համար համայնքային մակարդակում (նման պատասխանատուներից առնվազն մեկը կին պետք է լինի),
- 7) Կենսաբազմազանության (բուսական և կենդանական աշխարհի) մասնագետ՝ միջազգային փորձով / վարկատուների պահանջների իմացությամբ:

5.4 ՎՉԵԲ

Ծրագրի վարկատուն՝ ՎՉԵԲ-ը, կհետևի Ծրագրի բնապահպանական և սոցիալական արդյունավետությանը՝ ապահովելու համար Բնապահպանական և սոցիալական քաղաքականության պահանջներին համապատասխանությունը:

5.5 Ծրագրի Իրականացման Գործակալություն (ԾԻԳ)

Ծրագրի Իրականացման Գործակալությունը (ԾԻԳ), ի թիվս այլ գործառնությունների, կօգնի ՀՀ ՋԿ-ին իրականացնել ԲՍԿՊ-ով և Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլանով (ԲՍՄՊ) պահանջվող միջոցառումները, անհրաժեշտության դեպքում կանցկացնի ուսուցում ՀՀ ՋԿ-ի և Ծրագրի իրականացմանը մասնակցող կապալառուների Բնապահպանական և սոցիալական կառավարման կարողությունները բարձրացնելու համար, կվերանայի տեղանքին հատուկ ԲՍԿՊ-ները, կօգնի ՀՀ ՋԿ-ին մշակել և ներառել ԲՍՄՊ-ի, ՏՊ-ի, ՇՆՊ-ի, ԿՄՊ-ի, ՄԺԿՊ-ի և այլ կառավարման պլանների շրջանակներում պահանջվող քաղաքականությունները, պլանները, ընթացակարգերը, գործողությունները և մեղմացնող միջոցառումները Ծրագրի ընդհանուր կառավարման համակարգում և բյուջեի հաստատման ընթացակարգերում, անհրաժեշտության դեպքում:

ԾԻԳ-ը օգնելու է ՀՀ ՋԿ-ին իրականացնել ԲՍԿՊ-ով, ԲՍՄՊ-ով և առնչվող կառավարման պլաններով պահանջվող միջոցառումները: ԾԻԳ-ը նաև անհրաժեշտության դեպքում կանցկացնի ուսուցում ՀՀ ՋԿ-ի և Ծրագրի իրականացմանը մասնակցող կապալառուների ԲԼՍ կառավարման կարողությունները հզորացնելու համար: Ջրամբարի պատշաճ շահագործման վերաբերյալ Ջրառ» ՓԲԸ անձնակազմի ուսուցումը նույնպես կկազմակերպվի ԾԻԳ-ի կողմից:

Բացի այդ, ԾԻԳ-ը կվերանայի տեղանքին հատուկ ԲԼՍ կառավարման պլանները և կաջակցի ՀՀ ՋԿ-ին մշակել և ներառել ԲՍՄՊ-ով, ՇՆՊ-ով, ԿՄՊ-ով, ՄԺԿՊ-ով և այլ կառավարման պլաններով պահանջվող քաղաքականությունը, պլանները, ընթացակարգերը, գործողությունները և մեղմացնող միջոցառումները Ծրագրի ընդհանուր կառավարման համակարգում և բյուջեի հաստատման գործընթացներում, անհրաժեշտության դեպքում:

5.6 «Ջրառ» ՓԲԸ - Ջրամբարների օպերատոր

«Ջրառ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (ՓԲԸ), գործում է ՀՀ ՏԿԵՆ ներքո և պատասխանատու է ՀՀ-ում 1-ին և 2-րդ կատեգորիայի ջրամբարների շահագործման և պահպանման համար:

«Ջրառ» ՓԲԸ-ն կմշակի և կիրականացնի Մեղրի ջրամբարի շահագործման և պահպանման փուլի ԲՍԿՊ-ով առաջարկվող պլանների և միջոցառումների կառավարումը և մշտադիտարկումը:

5.7 Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ

Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) կտրամադրի մթնոլորտային արտանետումների թույլտվություններ, կհաստատի վտանգավոր թափոնների անձնագրերը և թափոնների

գոյացման նորմատիվները և դրանց տեղադրման սահմանաքանակները: ՇՄՆ-ը նաև կտրամադրի ուղեցույց և աջակցություն Ծրագրին իր լիազորությունների շրջանակներում:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ) կաջակցի Ծրագրին հնագիտական ուսումնասիրություններ անցկացնելու և նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հետ կապված հարցերում: ԿԳՄՍՆ-ը նաև կաջակցի Ծրագրին իր լիազորությունների շրջանակներում:

Մեղրիի համայնքապետարանը, ինչպես նաև ազդակիր գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարները կորոշեն Հողային Հանույթի Տեղադրման Վայրերը (ՀՀՏՎ) և հողի բերրի շերտի պահեստավորման վայրերը, կհեշտացնեն կապալառուի և ազդակիր բնակավայրերի բնակչության միջև հաղորդակցությունը և անհրաժեշտության դեպքում կօգնեն կապալառուին ժամանակավոր հողերի ձեռքբերման կամ օգտագործման դեպքերում:

6. Բնապահպանական և սոցիալական կառավարումը Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում

6.1 Ծրագրի կենսացիկլերը

Նախակառուցման փուլ

Նախակառուցման փուլում ազգային և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններից (օրինակ՝ նախարարություններից, տեսչական մարմիններից, հաստատություններից, համայնքներից) և/կամ Պատվիրատուից և ՎՇԵԲ-ից Ծրագրին վերաբերող որոշումների (օրինակ՝ հաստատումների, թույլտվությունների կամ համաձայնությունների) ստացման գործընթացից բխող ցանկացած պահանջ կներառվի կառուցման վերջնական փաստաթղթերում:

Կառուցման փուլ

Կառուցման փուլին վերաբերող հիմնական բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների իրականացումը կհանձնարարվի կառուցման կապալառու(ներ)ին: Այս հանձնարարությունը կկարգավորվի ԲՍԿԴ-ով, որը կկազմի մրցութային փաստաթղթերի, գնումների գործընթացի և կառուցման կապալառուի պայմանագրի մաս:

Կառուցման կապալառու(ներ)ը կմշակեն Կառուցման Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան (ԿԲՍԿՊ), որը պետք է համապատասխանի Լիճք ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ հաշվետվությանը և սույն ԲՍԿԴ-ին: ԿԲՍԿՊ-ը կներառի Տեղանքին Բնորոշ Բնապահպանական և Սոցիալական Կառավարման և Մշտադիտարկման Պլաններ (ՏԲԲՍԿՄՊ) կամ կառուցման ժամանակահատվածում բնապահպանական և սոցիալական խնդիրներին անդրադառնալու ընթացակարգեր: Պատվիրատուի կողմից նշանակված վերահսկող ինժեները պետք է վերանայի և հաստատի այս փաստաթղթերը:

Կառուցման կապալառու(ներ)ի պարտականությունն է որպես Ծրագրի պլանավորման առաջընթաց՝ ինչպես շինարարությունից առաջ, այնպես էլ դրա ընթացքում, ճշտել ԲՍԿԴ-ում դիտարկվող խնդիրները: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում շինարարական գոտիների, աշխատուժի համար ժամանակավոր կառույցների, շինարարական և այլ նյութերի պահեստավորման, երթևեկության և տրանսպորտային հոսքերի վերահսկման, շրջակա միջավայրի պահպանության և թափոնների ու աշխատանքի կառավարման, աշխատանքային և համայնքային առողջության ու անվտանգության, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և այլ հարակից հիմնահարցերը:

Շահագործման փուլ

Շահագործման փուլը կմեկնարկի ջրամբարի և օժանդակ ենթակառուցվածքների լիարժեք շահագործման հանձնումից հետո: Այս փուլում բոլոր աշխատանքները կառուցման կապալառուի

կողմից կհանձնվեն ջրամբարի օպերատորին («Ջրառ» ՓԲԸ), որը պատասխանատու կլինի բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումների մեծ մասի իրականացման համար՝ ապահովելու Ծրագրի մեղմացման ռազմավարության շարունակական համապատասխանությունը: Այս միջոցառումները կկառավարվեն «Ջրառ» ՓԲԸ-ի Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգի (ԲՍԿՀ) միջոցով՝ համապատասխան կանոնակարգերով և ուղեցույցներով:

Բացի այդ, տեխնիկական սպասարկման գործունեությամբ պայմանավորված հիմնական շրջակա միջավայրի և սոցիալական մեղմացման միջոցառումների իրականացումը կարող է հանձնարարվել նշանակված կապալառուին (այսինքն՝ ջրամբարի սպասարկման կապալառուին): Նման հանձնարարությունը կկարգավորվի պայմանագրային հիմունքներով:

6.2 Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ

Կառուցման կապալառուն պետք է մշակի գործառնական, կառավարման և մշտադիտարկման պլանների փաթեթ՝ համաձայն Ծրագրի ԲՍԿՊ-ի, որոնք պետք է իրագործվեն նախակառուցման և կառուցման փուլերում՝ բնապահպանական և սոցիալական ազդեցությունները արդյունավետ կառավարելու համար: Առաջարկվող ՏԲԲՍԿՄՊ-ները պետք է նվազագույնը ներառեն՝

- Երթևեկության կառավարման պլան,
- Բուսաշերտի կառավարման պլան,
- Զարհանքների կառավարման պլան,
- Հողային հանույթի տեղադրման կառավարման պլան,
- Վտանգավոր Նյութերի կառավարման պլան,
- Արտահոսքերի կանխարգելման և կառավարման պլան,
- Պայթեցման անվտանգության կառավարման պլան,
- Թափոնների կառավարման պլան,
- Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման կառավարման պլան,
- Շինարարական ճամբարի կառավարման պլան, ներառյալ ճամբարի վարքագծի կանոնագիրքը և ճամբարի կառավարման ենթապլանները,
- Տեղական զբաղվածության և գնումների պլան,
- Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան,
- Մշակութային ժառանգության կառավարման պլան,
- Պատահական գտածոների ընթացակարգ,
- Գետափնյա կենսամիջավայրերի կառուցման պլան,
- Օդի, ջրի և հողի որակի մշտադիտարկման պլան,
- Աղմուկի և թրթռման մշտադիտարկման պլան,
- Տարաբնակեցման պլան,
- Շահառուների ներգրավման պլան (որը պետք է թարմացվի տարեկան առնվազն մեկ անգամ):

Մեղրի ջրամբարի շահագործման փուլում Պատվիրատուի (ՀՀ ՋԿ և ԾԻԳ) կողմից «Ջրառ» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ կմշակվեն և կիրականացվեն մի շարք բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ՝ հաշվի առնելով սույն ԲՍԿՊ-ի շահագործման փուլ բաժնում նշված առաջարկություններն ու մեղմացնող միջոցառումները (տե՛ս ստորև բերված աղյուսակը), ներառյալ՝

- Ոռոգման ջրի և բնապահպանական թողքի բացթողնման կառավարման պլանը,
- Ջրամբարի շահագործման և սպասարկման պլանը,

- Երթևեկության կառավարման պլանը,
- Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը,
- Շահագործման և պահպանման պլան,
- ԱԱԱՊ ընթացակարգերը (պլանը),
- Թափոնների կառավարման պլանը,
- Շահառուների ներգրավման պլանը,
- Կենսաբազմազանության միջոցառումների պլանը:

7. Բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումներ

Ծրագրի նախակառուցման (նախագծային) փուլի (Բաժին Ա), շինարարության փուլի (Բաժին Բ) և շահագործման փուլի (Բաժին Գ) համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ամփոփված են ստորև բերված **Աղյուսակ 6**-ում: Սույն աղյուսակը ներկայացնում է մեղմացում պահանջող գործունեությունները և դրանց հետ կապված ազդեցությունները, սահմանում է իրականացված միջոցառումների արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ թիրախները ու ցուցանիշները, ինչպես նաև նույնականացնում է ֆինանսավորման աղբյուրները և պատասխանատու կառույցները:

Աղյուսակ 6. Բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումներ

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
Բաժին Ա - ՆԱԽԱԿԱՌՈՒՑՄԱՆ (ՆԱԽԱԳԾՄԱՆ) ՓՈԽ					
Բուսականության մաքրում, ծառերի հատում	Ազդեցությունը լանդշաֆտի և տեսողական միջավայրի վրա (8.2.5)	Մշակել Ծառահատման և Ծառատնկման Կառավարման Պլան (ԾԾԿՊ) և ստանալ հաստատում վերահսկող ինժեների և ագրակիր համայնքի ղեկավարի կողմից:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԾԾԿՊ -ն մշակված և հաստատված է:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):
Բուսահողի հեռացում և պահեստավորում, բեռնման և բեռնաթափման աշխատանքներ, հողային զանգվածների և նյութերի տեղափոխում, շինարարական նյութերի և նավթամթերքների պահեստավորում և այլն	Ազդեցություն հողային ռեսուրսների վրա (8.2.8)	1) Մշակել Բուսահողի Կառավարման Պլան (ԲԿՊ) և ստանալ վերահսկող ինժեների հաստատումը, 2) Ստանալ անհրաժեշտ թույլտվություն բուսահողի տեղափոխման և պահեստավորման աշխատանքների համար, 3) Մշակել Վտանգավոր Նյութերի Կառավարման Պլան (ՎՆԿՊ) և ստանալ վերահսկող ինժեների հաստատումը,	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	ԲԿՊ, ՎՆԿՊ, ՊԱՎԿՊ և ԱԿԿՊ մշակվում և հաստատվում են:	Մ - Կառուցման կապալառու Հ - Վերահսկող ինժեներ ՇԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ) և ՎԶԵԲ:

¹⁴Մ-մշակում, Ի-իրականացում, Հ-հաստատում, Վ-վերահսկում, Մ-մշտադիտարկում, Շ-շահագործում

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		4) Մշակել Արտահոսքի Կանխարգելման և Կառավարման Պլան (ԱԿԿՊ) և ստանալ վերահսկող ինժեների հաստատումը:			
Կառուցման փուլի ընթացքում առաջացող բոլոր թափոնների առաջացման գործընթացները և գործունեությունները	Թափոնների առաջացում և կառավարում (8.2.9)	<p>1) Ստանալ թափոնների կառավարման ոլորտը կարգավորող բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և նորմատիվ փաստաթղթերը՝ համաձայն Հայաստանի օրենսդրության, ներառյալ առնվազն՝</p> <ul style="list-style-type: none"> - վտանգավոր թափոնների անձնագրեր, - թափոնների առաջացման նորմեր և դրանց հեռացման սահմանաքանակներ, - թափոնների առաջացման հաշվառման մատյաններ և այլն, - թափոնների նախնական գրանցման մատյաններ: <p>2) Մշակել և գործարկել Ծրագրի Թափոնների Կառավարման Պլանը (ԹԿՊ):</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	ՀՀ թափոնների ոլորտի օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները ստացված են: ԹԿՊ և ՀՀԿՊ մշակված և հաստատված են: ՀՀՏԿ Նույնականացված և համաձայնեցված են:	Մ - Կառուցման կապալառու Հ - Վերահսկող ինժեներ և Մեղրի համայնքի ղեկավար (ՀՀՏԿ-ի տեղակալումների համար) ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀՋԿ, ԾԻԳ) և ՎՁԵԲ:
Շինանյութերի, նավթամթերքների և աշխատողների տեղափոխում	Ազդեցությունները երթևեկության վրա (8.2.11)	1) Մշակել Երթևեկության Կառավարման Պլան (ԵԿՊ), որը կհաստատվի վերահսկող ինժեների և պատվիրատուի, ինչպես նաև համապատասխան մարզային իշխանությունների և ճանապարհային ոստիկանության կողմից,	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԵԿՊ-ն մշակված և հաստատված է:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ, Մեղրի համայնքի ղեկավար, ճանապարհային ոստիկանություն:

ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>2) Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ, Ծրագրի համար օգտագործվող համայնքային ճանապարհների վիճակը պետք է ստուգվի և փաստաթղթավորվի կառուցման կապալառուների և ազդակիր բնակավայրերի ներկայացուցիչների կողմից: Եթե Ծրագրով պայմանավորված էական վնաս է պատճառվում, կառուցման կապալառու պետք է վերականգնի ճանապարհները առնվազն շինարարությունից առաջ եղած վիճակին:</p> <p>ԵԿՊ-ը նաև պետք է ներառի <i>Բաժիններ 8.3.2, 8.3.5 և 8.5.2-ում նշված միջոցառումները:</i></p>			ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:
Տարածքի մաքրման և բուսականության հեռացում:	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Համապարփակ գործողություն</p> <p>Նախակառուցման փուլում մշակել կենսաբազմազանության միջոցառումների պլան (ԿՄՊ)¹⁵, որը կներառի նախակառուցման, կառուցման և շահագործման փուլերի մեղմացնող միջոցառումները: ԿՄՊ-ն կուրվագծի և ուղեցույց կհանդիսանա այնպիսի բաղադրիչների համար, ինչպիսիք են՝ կենսաբազմազանության կառավարման պլանը (ներառյալ</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԿՄՊ-ն արդյունավետորեն իրականացվում է: Կենսաբազմազանության հետ կապված այլ ծրագրեր մշակվում և իրականացվում են կառուցման փուլում:	ՄԱԻ - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

¹⁵Կենսաբազմազանության միջոցառումների պլանը (ԿՄՊ) մշակվում և հաստատվում է նախքան կապալառուի ընտրության մրցութային գործընթացը: Կենսաբազմազանությանը վերաբերող այլ պլաններ մշակվում են կապալառուի կողմից նախքան կառուցման մեկնարկը: Որոշ սահմանված մեղմացնող միջոցառումներ իրականացվում են նախակառուցման փուլում, իսկ որոշները՝ կառուցման ողջ ընթացքում:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		մշտադիտարկումը) և Գետային կենսամիջավայրերի կառուցման պլանը: Ստորև թվարկված մեղմացնող և/կամ կառավարման միջոցառումները պետք է ներառվեն ԿՄՊ-ի մեջ:			
Շինհրապարակի մաքրում և բուսածածկի հեռացում	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Կենսամիջավայրեր</p> <p>1) Ուսումնասիրել Ծրագրի տարածքում առկա Առաջնահերթ կենսաբազմազանության հատկանիշները (ԱԿՀ), դրանց բուսական կազմը և Էկոլոգիական կառուցվածքը, ինչպես նաև որոշել դրանց հստակ սահմանները,</p> <p>2) Մշակել «Գետային կենսամիջավայրերի կառուցման պլան»՝ ուղղորդելու ջրամբարի ափերի երկայնքով հետևյալ առաջնահերթ կենսամիջավայրի (ԱԿՀ) զարգացումը, կառուցումը և պահպանումը.</p> <p>G1.11 Գետափնյա ուռուտային անտառներ (92A0 սպիտակ ուռենի Salix alba և սպիտակ բարդի Populus alba պատկերասրահային անտառներ)</p> <p><u>Նախնական քանակական գնահատում</u></p> <p>G1.11 Գետային կենսամիջավայրի ընդհանուր կորսված մակերեսը կազմում է 5,29 հա: Զրամբարի պարագիծը, որը պոտենցիալ</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրում:	Ծրագրի ազդեցությունները կենսամիջավայրերի վրա կանխվում են, նվազեցվում, մեղմվում կամ փոխհատուցվում:	Մ - Կառուցման կապալառուի կողմից վարձված մասնագիտացված ընկերություն: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>պիտանի է գետային կենսամիջավայրի ստեղծման համար, գնահատվում է մոտ 2 կմ:</p> <p>Ջրամբարից վերև և ներքև գտնվող բնական գետային կենսամիջավայրի մոտ 0,95 հա-ն, որը գտնվում է ջրածածկվող տարածքից դուրս պաշտպանիչ/բուժերային գոտում, կարող է պահպանվել: Հաշվի առնելով այս թվերը՝ «զուտ կորստի բացակայության» (բազմապատկիչ = 1) հասնելու համար գետային կենսամիջավայրի կառուցման ամիսներ շերտի լայնությունը պետք է լինի մոտ 22 մ ($5,29 \text{ հա} - 0,95 \text{ հա}) \times 10,000 / 2,000 = 21,7 \text{ մ}$):</p> <p>«Զուտ օգուտի հասնելու համար անհրաժեշտ է ջրամբարից վերև և ներքև պահպանել բնական գետային կենսամիջավայրերի լրացուցիչ տարածքներ: Կենսամիջավայրերի կառուցման և պահպանման վերաբերյալ առաջարկությունները, ներառյալ բազմապատկիչները, պետք է մշակվեն Կենսաբազմազանության միջոցառումների պլանում (ԿՄՊ):</p>			
Շինհրապարակի մաքրում և բուսածածկի հեռացում	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Բուսական աշխարհ</p> <p>1) Ուսումնասիրել առաջնահերթ գետային կենսամիջավայրի բուսական կազմը և կառուցվածքը,</p> <p>2) Մշակել Գետային կենսամիջավայրերի կառուցման</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Գետային Կենսամիջավայրերի Կառուցման Պլանը և ԵԿՊ-ն մշակվում են:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎևՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՉԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		պլան՝ որպես հիմք ընդունելով տեղական բուսատեսակները, 3) Մշակել Ճառահատման և ծառատնկման կառավարման պլան (ԾԾԿՊ):			
Կառուցման կապալառուի աշխատողների վարքագիծը	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Կենդանական աշխարհի Մշակել աշխատակիցների վարքագծի կանոնագիրք՝ նախատեսված կառուցման կապալառուի համար՝ որսագողությունը կանխելու նպատակով:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Աշխատակիցների վարքագծի կանոնակարգը մշակված և հաստատված է:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:
Շինհրապարակի մաքրում և բուսածածկի հեռացում	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Կենդանական աշխարհի Իրականացնել Ծրագրի տարածքի հետազոտություն՝ չղջիկների տեսակները և, առկայության դեպքում, դրանց թաքստոցները (որոնք կարող են լինել ծառերի, խոռոչների, ճեղքերի, սաղարթների կամ քարանձավների մեջ) հայտնաբերելու և դրանց քանակը գնահատելու համար: Չղջիկների թաքստոցների հաստատման դեպքում ջրածածկվող տարածքի մոտակայքում նույնականացնել առկա անտառային և ժայռային կենսամիջավայրերը, որոնք պոտենցիալ պիտանի են չղջիկների բնակեցման համար (առաջին հերթին՝ ջրամբարի բուժերային/պաշտպանիչ գոտում): Պատրաստել չղջիկների արհեստական բներ (արկղեր) և տեղադրել դրանք ծառերի վրա՝	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Չղջիկները պոպուլյացիան պահպանված է:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		չղջիկների համար կենսամիջավայրի տարողունակությունը մեծացնելու նպատակով:			
Շինհրապարակի մաքրում և բուսածածկի հեռացում	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Նստակյաց կենդանիներ</p> <p>1) Իրականացնել ազդեցության ենթակա տարածքի հետազոտություն՝ տեղական կենսամիջավայրերը քարտեզագրելու և Անտառային քնամուլի, ինչպես նաև մողեսների ու օձերի առաջնահերթ տեսակների առանձնյակների քանակը գնահատելու համար,</p> <p>2) Ջրածածկվող տարածքի հարակից գոտիներում (նախ և առաջ՝ ջրամբարի բուժերային/պաշտպանիչ գոտում) նույնականացնել առկա անտառային և ժայռային կենսամիջավայրերը, որոնք պիտանի են Անտառային քնամուլի, օձերի և մողեսների վերաբնակեցման համար: Առաջարկվող ժամանակահատվածը՝ ուշ գարնանից մինչև վաղ աշուն (մայիսից սեպտեմբեր),</p> <p>3) Տնկել տեղական ծառատեսակներ (օրինակ՝ վայրի շլորենի և տանձենի)՝ Անտառային քնամուլի կենսամիջավայրերի կորուստը փոխհատուցելու համար,</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունները նստակյաց կենդանիների վրա կանխվում, նվազեցվում, մեղմվում կամ փոխհատուցվում են:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>4) Ջրածածկվող տարածքի հարակից գոտում ստեղծել լրացուցիչ ժայռային ելքեր՝ ավելացնելով տեղական թփուտային տեսակների քանակը, օձերի և մողեսների կենսամիջավայրերը բարելավելու նպատակով,</p> <p>5) Հետագոտել տարածքը՝ Գորշուկի և այլ փորող (բնակալող) կենդանիների բնակեցված բները քարտեզագրելու համար:</p>			
Շինհրապարակի մաքրում և բուսածածկի հեռացում	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Միջին և խոշոր կաթնասուններ</p> <p>1) Իրականացնել ազդեցության ենթակա տարածքի հետազոտություն՝ Հնդկական մացառախոզի բների առկայությունը հաստատելու կամ բացառելու համար. բն(եր)ի հայտնաբերման դեպքում որսալ կենդանիներին և վերաբնակեցնել ջրամբարի տարածքից հեռու գտնվող անվտանգ կենսամիջավայրերում,</p> <p>2) Իրականացնել ազդեցության ենթակա տարածքի հետազոտություն՝ Անտառային կատվի, Լուսանի և Գորշ գայլի բների առկայությունը հաստատելու կամ հերքելու համար. նման բն(եր)ի հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցներ կենդանիներին ջրամբարի</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունները կենդանիների վրա կանխվում, նվազեցվում, մեղմվում կամ փոխհատուցվում են:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		տարածքից վանելու (հեռացնելու) համար: <i>Երկու հետազոտություններն էլ պետք է իրականացվեն բազմազան շրջանից առաջ կամ հետո:</i>			
Թռչնատեսակների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Թռչուններ</p> <p>1) Ջրամբարի տարածքից դեպի ներքև ընկած հատվածում տնկել տեղական տեսակների լրացուցիչ ծառեր՝ բարդի, ուռենի և ընկուզենի, Սիրիական մեծ խայտաբղետ փայտփորի համար լրացուցիչ բնադրման կենսամիջավայրեր ապահովելու նպատակով,</p> <p>2) Վերականգնել հարակից լայնատերև անտառների մասնատված հատվածները՝ այնպիսի առաջնահերթ տեսակների բնադրման կենսամիջավայրերն ընդլայնելու համար, ինչպիսիք են Դեղնափոր գեղգեղիկը և Յախաքլորաորսը:</p> <p><i>Այս վայրերը պետք է ներառվեն «Գետային կենսամիջավայրերի կառուցման պլանի» համաձայն ստեղծվող կենսամիջավայրերի և բուժֆերային/պաշտպանիչ գոտու սահմաններում պահպանվող կենսամիջավայրերի մեջ:</i></p> <p><u>Նախնական քանակական գնահատում</u></p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը թռչունների վրա կանխվում, նվազեցվում, մեղմվում կամ փոխհատուցվում են:	ՄԱԻ - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>Գետային կենսամիջավայրերի կառուցման պլանի» համաձայն ստեղծվող և պահպանվող կենսամիջավայրերի համար պիտանի պաշտպանիչ/բուֆերային գոտու ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 26 հա:</p> <p>Թռչունների առաջնահերթ տեսակների կորսված կենսամիջավայրերի փոխհատուցման համար անհրաժեշտ նվազագույն մակերեսը (բազմապատկիչ = 1), հիմնված «զուտ կորստի բացակայության» մոտեցման վրա, նույնպես կազմում է 26 հա (տե՛ս վերևում «Թռչունների բնադրման և կերհայթայթման կենսամիջավայրերի կորուստ» ենթաբաժինը): Ըստ այդմ, բուֆերային տարածքը բավարար է «զուտ կորստի բացակայության» արդյունքին հասնելու համար «Զուտ օգուտ» արդյունքի հասնելու համար կապահանջվի լրացուցիչ տարածք: Եթե բուֆերային գոտուն հարակից մարգագետիններում կիրառվեն արոտավայրերի կայուն կառավարում, դրանք կօգնեն ապահովել անհրաժեշտ սննդի պաշար մի քանի առաջնահերթ տեսակների համար (տե՛ս «Շահագործման փուլ» բաժինը): Երկու ԿԿՏ և ԿԹՏ կարևոր տարածքներ՝ «Չանգեզուրը» և «Մեղրին», գտնվում են Նախագծի</p>			

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		տարածքից 5-9 կմ հեռավորության վրա և կարող են օգտագործվել թռչունների համար անհրաժեշտ լրացուցիչ տարածքների պահպանության նպատակով : Պաշտպանիչ/բուժերային գոտում կառուցված և պահպանվող կենսամիջավայրերի օգտագործման, ինչպես նաև լրացուցիչ կենսամիջավայրերի պահպանության վերաբերյալ առաջարկությունները, ներառյալ բազմապատկիչները և համապատասխան հաշվարկները, պետք է մշակվեն որպես Կենսաբազմազանության միջոցառումների պլանի մաս:			
Անողնաշարավորների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Անողնաշարավորներ 1) Հաշվարկել կորսվող (Celtis sp.) ծառերի քանակը և տնկել համարժեք քանակությամբ ծառեր հարակից դեզրադացված տարածքների բաց լանջերին՝ Իոնիական թիթեռի (Thaleropsis ionia) կենսամիջավայրի կորուստը փոխհատուցելու համար: 2) Քանակապես գնահատել կորսված մարգագետինները և ստեղծել նմանատիպ մարգագետնային տարածքներ հարակից խճանկարային (mosaic) և դեզրադացված տարածքներում՝ Աուրինիա թիթեռի (Euphydrys aurinia) և Դորկադիոն բզեզի	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը անողնաշարավորների վրա կանխվում, նվազեցվում, մեղմվում կամ փոխհատուցվում են:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>(Dorcadion laeve) կենսամիջավայրերի կորուստը փոխհատուցելու համար:</p> <p>3) Զանակապես գնահատել կորսվող անտառային տարածքները և վերականգնել հարակից լայնատերև անտառների մասնատված հատվածները՝ Հոլբերգի գնայուկ բզեզի (Carabus hollbergi) և Կոշտուկավոր պրոցերուսի (Procerus scabrosus) կենսամիջավայրերն ընդլայնելու և դրանց կորուստը փոխհատուցելու նպատակով</p> <p>Այս կենսամիջավայրերը պետք է ներառվեն «Գետային կենսամիջավայրերի կառուցման պլանի» համաձայն ստեղծվող կենսամիջավայրերի, բուֆերային/ պաշտպանիչ գոտում պահպանվող կենսամիջավայրերի և ջրամբարի տարածքին հարակից գոտիներում վերականգնված կենսամիջավայրերի մեջ:</p>			
Շինարարական աշխատանքների ընթացքում պատահարներ և միջադեպեր, նյութերի փոխադրում:	Հանրային օբյեկտների և ենթակառուցվածքների վրա ազդեցություններ (8.3.2)	Մշակել Երթևեկության Կառավարման Պլան (ԵԿՊ), որը նպատակ ունի նվազագույնի հասցնել տարածաշրջանային և տեղական ճանապարհային ենթակառուցվածքների վրա ճնշումը և հնարավորինս խուսափել զգայուն կլանիչներից:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Հանրային օբյեկտների և ենթակառուցվածքների վրա ազդեցությունը նվազագույն է:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
Հողի օտարում և փոխհատուցում: Ծրագրի շահառուներից բողոքների և մտահոգությունների ընդունում և գրանցում, խնդիրների ուսումնասիրություն, լուծումների տրամադրում և հաղորդակցության ու փաստաթղթավորման ապահովում ամբողջ լուծման գործընթացի ընթացքում:	Ազդեցություն հողի սեփականության վրա (8.3.3)	Ապահովել, որ Ծրագրի կարիքների համար օտարվող գյուղատնտեսական հողերի և արոտավայրերի բոլոր օգտագործողներին (եթե կան) տրամադրվեն մշակման և անասնապահական արածեցման համար հավասար կամ ավելի լավ որակի այլընտրանքային հողեր՝ համաձայն ՏՇ/ՏՊ-ի:	ՏՊ խորհրդատուի համար առանձին բյուջե:	ՏՇ-ը բողոքարկման մեխանիզմով և ՏՊ-ն մշակված և իրականացված են:	ՄԱԻ - ՏՊ խորհրդատու համայնքի ղեկավարի և հողերի կառավարման մարմինների հետ, Հ - Վերահսկող ինժեներ: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:
Շինարարական աշխատանքներ, փորման և պայթեցման աշխատանքներ, բեռնատարների տեղաշարժ համայնքային ճանապարհներով և այլն:	Հանրային առողջության և անվտանգության վրա ազդեցությունը (8.3.5)	1) Լրացնել ԵԿՊ, ներառելով՝ - Օպտիմալացված երթուղիներ և ժամեր՝ նյութեր, մասնավորապես՝ ծանր (օրինակ՝ խողովակներ) տեղափոխելու համար՝ համաձայնեցված ճանապարհային ուստիկանության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, - Տրանսպորտային ուղիների երկայնքով զգայուն կլանիչների (դպրոցներ, հիվանդանոցներ, բնակելի տարածքներ, այլ սոցիալական ենթակառուցվածքներ) նույնականացում և անհրաժեշտության դեպքում	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԵԿՊ-ը և ԱԻՊԱՊ-ի մշակված և հաստատված է:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>մեղմացնող միջոցառումների մշակում,</p> <p>2) Պահպանել մեքենաները՝ աղմուկը նվազեցնելու և կառավարել աշխատանքի ցերեկային ժամերով սահմանափակումը,</p> <p>3) Աշխատողների վարակիչ հիվանդությունների առկայության գնում և անհրաժեշտության դեպքում ապահովել բժշկական սպասարկում՝ տեղական բնակչության վրա տարածումը նվազեցնելու համար,</p> <p>4) Ապահովել շինարարական գոտիները ցանկապատերով, արգելապատնեշներով և նախազգուշացնող նշաններով,</p> <p>5) Մշակել և իրականացնել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլան (տես կետ 8.4),</p> <p>6) Տեղի բնակիչներին տեղեկացնել շինարարության ժամանակացույցի, ռիսկերի և անվտանգության միջոցառումների մասին:</p>			
Բոլոր գործընթացներն ու գործողությունները շինարարական աշխատանքների ընթացքում	Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում (8.3.6)	1) Մշակել Աշխատանքի Անվտանգության և Առողջության Պահպանման Կառավարման Պլան (ԱԱԱԿՊ), որը պետք է ներառի կառուցման փուլում ԱԱԱԿ	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԱԱԱԿՊ և ՊԱԿՊ մշակված և հաստատված են:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		<p>ցուցանիշների կառավարման հիմնական տարրերը, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> - ԱԱԱ դերերի և պատասխանատվությունների բաշխում, - ԱԱԱ ռիսկերի և վտանգների նույնականացում, - Տեղեկատվական հանդիպումներ, վերապատրաստում և գիտելիքների ստուգում, - ԱԱԱ ընթացակարգեր և կանոնակարգեր, - Բժշկական զննում, - Արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմներ, - Վտանգավոր նյութերի, քիմիական նյութերի և նավթամթերքի/վառելիքի կառավարում, - Հրդեհային անվտանգություն և արտակարգ իրավիճակների արձագանքում, - Բարձր ռիսկային աշխատանքների իրականացում, - Անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործում, - Ենթակապալառուների վերահսկում, - Անվտանգության միջադեպերի հետաքննություն, - Անհամապատասխանության պատասխանատվության սահմանում և այլն: 			ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		2) Մշակել Պայթեցման Անվտանգության Կառավարման Պլան (ՊԱԿՊ), որը ներառում է՝ <ul style="list-style-type: none"> - Դերեր և պարտականություններ, - Պայթուցիկների կառավարում, - Պայթեցման նախագծում և պլանավորում, - Պայթեցման գործունեության սեզոնային սահմանափակումներ, - Անվտանգության և արգելված գոտիներ, - Պայթեցման ընթացակարգեր, - Մոնիթորինգ և վերահսկողություն: 			
Աշխատանքի և աշխատանքային պայմանների հետ կապված գործողություններն ու գործունեությունները, ներառյալ շինարարական ճամբարի և կացարանային օբյեկտների կառավարումը	Աշխատողների իրավունքների և աշխատանքային պայմանների հետ կապված ազդեցություններ (8.3.7)	1) Շինարարական կապալառուի հետ կնքված պայմանագրային կետերում ներառել ազգային աշխատանքային կանոնակարգերի և ՎՋԵԲ ԻՊ 2-ի պահանջները, հետ կապված պահանջները, 2) Մշակել Աշխատանքի և Աշխատանքային Պայմանների Կառավարման Պլան շինարարության մեկնարկից առաջ, ունենալու համար բավարար վերանայելու և ներդնելու ժամանակ, 3) Մշակել և իրականացնել Շինարարական ճամբարի Կառավարման Պլան, ներառյալ ենթապլաններ՝ ճամբարի վարքականոնի և ճամբարի	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ՎՋԵԲ ԻՊ2-ի համապատասխան պահանջները ներառված են կառուցման պայմանագրում: Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլանը և շինարարական ճամբարի կառավարման պլանը մշակված և հաստատված են:	Մ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) (1-ին կետի համար) և Կառուցման կապալառու (2-րդ և 3-րդ կետերի համար): Հ - Վերահսկող ինժեներ (2-րդ և 3-րդ կետերի համար): ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՋԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
		կառավարման համար, որոնք պետք է ներառեն աշխատողների կացարանների պահանջներ՝ համաձայն ՀՀ աշխատանքային, սանիտարական և առողջապահական նորմերի, ՎՁԵԲ ԻՊ 2-ի, ՄՖԿ/ՎՁԵԲ «Աշխատողների կացարաններ. գործընթացներ և ստանդարտներ» ուղեցույցի դրույթների, ԱՄԿ-ի Աշխատողների կեցավայրերի նկատմամբ առաջարկությունների (1961, թիվ 115), ինչպես նաև գենդերային առանձնահատկությունների:			
Աշխատողների և ազդեցության ենթարկված բնակավայրերի բնակիչների միջև փոխազդեցությունները	Գենդերային բռնություն և ոտնձգություն (8.3.8)	Մշակել Գենդերային Բռնության և Ոտնձգության (ԳԲՈ) քաղաքականություն և նշանակել պատասխանատու անձանց՝ աշխատուժում և դրա սահմաններից դուրս ԳԲՈ դեպքերի կառավարման համար:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	ԳԲՈ ռիսկերի կառավարում, որոնք կապված են աշխատողների և ազդեցության ենթարկված բնակավայրերի բնակիչների փոխազդեցությունների հետ:	Մ - (ՀՀԶԿ, ԾԻԳ): Ի - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:
Արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են սողանքները, երկրաշարժերը, միջադեպերը, արտահոսքերը և ճեղքվածքները	Արտակարգ իրավիճակներ և արձագանք (8.4)	Մշակել տեղանքին հատուկ արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգեր այնպիսի միջադեպերի համար, ինչպիսիք են սողանքները, մեքենաների վթարները կամ վտանգավոր նյութերի թափումները:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Արտակարգ իրավիճակներին արձագանքման ընթացակարգերը մշակված և հաստատված են:	Մ - Կառուցման կապալառու: Հ - Վերահսկող ինժեներ: ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎՁԵԲ:
Հողի հանման և փորման աշխատանքներ, հանքի	Ազդեցություն նյութական մշակութային	1) Վարձել որակավորված մշակութային ժառանգության մասնագետ լիազորված	Ծրագրի Կառուցման կապալառուի	Մշակվում և հաստատվում են ՊԳԸ-ները՝ մանրամասն	Մ - Կառուցման կապալառու:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁴
փորման աշխատանքներ, էլեկտրահաղորդման գծերի կառուցում և այլ հարակից շինարարական գործունեություններ, որոնք կարող են ազդել մշակութային ժառանգության օբյեկտների վրա, որոնք գտնվում են Ծրագրի ուղղակի ազդեցության տարածքից դուրս, սակայն նրա սահմանված բուֆերային գոտում	Ժառանգության վրա (8.5.1)	<p>հաստատությունից՝ շինարարական աշխատանքների ընթացքում ներկա գտնվելու և բոլոր շինհրապարակներում հնագիտական հսկողություն իրականացնելու, ինչպես նաև բոլոր մեղմացնող միջոցառումների իրագործմանը և պատվիրատուին/բանկին հաշվետվության մշակմանը աջակցելու համար,</p> <p>2) Կառուցման աշխատանքներից առաջ մշակել Պատահական Գտածոների Ընթացակարգ (ՊԳԸ)¹⁶ Ծրագրի համար և վերապատրաստել համապատասխան աշխատողներին այն կիրառելու համար (որպեսզի նրանք կարողանան նույնականացնել պատահական գտածոները, դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել ղեկավարությանը), պահպանել վերապատրաստման գրանցամատյանը և ներառել դրա վերաբերյալ տվյալները մշտադիտարկման հաշվետվություններում:</p>	պայմանագրի շրջանակներում:	դաշտային հնագիտական ուսումնասիրությունները ավարտվում են շինարարության մեկնարկից առաջ, բացի այդ կառուցման կապալառուի կազմում ներգրավվում է որակավորված մշակութային ժառանգության մասնագետ:	Հ - Վերահսկող ինժեներ և ԿԳՄՆ (ՄԺԿՊ-ի համար): ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

¹⁶Այս ընթացակարգի ձևանմուշը կարելի է գտնել ՎԶԵԲ-ի 2023 թվականի ԻՊԾ-ի ուղեցույցում հետևյալ հասցեով՝ <https://www.ebrd.com/documents/environment/guidance-note-performance-requirements-8-cultural-heritage.pdf>։ Բացի այդ, «պատահական գտածոների» վերաբերյալ կարգավորումները սահմանվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ թիվ ՀՕ-261 (1998) օրենքով։ Մասնավորապես, օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, եթե շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների ընթացքում հայտնաբերվում է անհայտ պատմամշակութային հուշարձան/ժառանգություն, վերը նշված աշխատանքները պետք է դադարեցվեն, և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է անհապաղ տեղեկացնեն լիազորված պետական մարմիններին։

ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
Բաժին Բ - ԿԱՌՈՒՅՄԱՆ ՓՈԽ					
Տարածքի մաքրում, հողային և փորման աշխատանքներ, շինարարական տեխնիկայի և ծանր բեռնատարների շահագործում, հանքի փորման աշխատանքներ, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ և այլն	Օդի որակի վրա ազդեցությունը (8.2.4)	<ol style="list-style-type: none"> 1) Օգտագործել ժամանակակից շինարարական տեխնիկա՝ առնվազն Euro IV ստանդարտներին համապատասխան շարժիչներով, արտանետումների վերահսկմամբ և նվազագույն աղմուկային բնութագրերով, 2) Կատարել օգտագործվող շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների կանոնավոր տեխնիկական սպասարկում, 3) Սորուն նյութերի տեղափոխման ժամանակ մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում, 4) Բաց տարածքներում՝ ներառյալ պահեստային կույտերից և հողի բերրի շերտի պահման վայրերից, իրականացնել փոշու նվազեցմանը միտված աշխատանքներ՝ կիրառելով վերահսկման միջոցներ, ինչպիսիք են ծածկումներ և պատնեշների տեղադրում, ինչպես նաև խոնավության մակարդակի բարձրացում, 5) Սահմանափակել հողային, այդ թվում փորման աշխատանքները 	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Օդի, ջրի և հողի որակի մոնիթորինգի ծրագիրը մշակված է, հաստատված շինարարության մեկնարկից առաջ և իրականացվելու է շինարարության ընթացքում: Նշված բոլոր մեղմացման միջոցառումները արդյունավետորեն կատարվում են ամբողջ շինարարության ընթացքում:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ), ՎՋԵԲ:

¹⁷Մ-մշակում, Ի-իրականացում, Հ-հաստատում, Վ-վերահսկում, Մ-մշտադիտարկում, Շ-շահագործում

ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի քրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>ուժեղ քամիների ժամանակահատվածում,</p> <p>6) Շինարարական օբյեկտների և տեխնիկայի տեղակայման ժամանակ պետք է հաշվի առնել գերակշռող քամու ուղղությունները,</p> <p>7) Իրականացնել կանոնավոր ջրցան՝ ինչպես տարածքի, այնպես էլ մերձակա ճանապարհների վրա՝ հատկապես փորման և հողային աշխատանքների ընթացքում,</p> <p>8) Նվազեցնել փորման և հետլցման աշխատանքների միջև ընկած ժամանակահատվածը,</p> <p>9) Արգելել շինանյութերի և թափոնների այրումը:</p>			
Շինարարական տեխնիկայի և նյութերի տեղադիրք	Ազդեցությունը լանդշաֆտի և տեսողական միջավայրի վրա (8.2.5)	<p>1) Շինարարական տեխնիկան տեղադրել շինհրապարակի ավելի քիչ տեսանելի հատվածներում՝ օգտագործելով տեղագրությունը կամ բնական պաշտպանիչ տարրերը՝ դրանք Մ2 մայրուղուց, Լիճք գյուղից և այլ դիտակետերից պաշտպանելու համար,</p> <p>2) Համոզվել, որ հողի բերրի շերտի, կավի, խճաքարի կամ այլ նյութերի պաշարները պահվում են նշանակված հատվածներում և ծածկված կամ պաշտպանված են՝ դրանց տեսողական</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Լանդշաֆտի վրա Ծրագրի ազդեցությունը հասցված է նվազագույնի՝ առաջարկված միջոցառումների իրականացման միջոցով:	ՄԱԻ - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
Ծառերի տնկում՝ Ծառահատման և Ծառատնկման Կառավարման Պլանի համաձայն		ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար, 3) Շինհրապարակը պարբերաբար մաքրել՝ տեսողական խառնաշփոթից խուսափելու համար, որը կարող է տարածքը ավելի աչքի ընկնող դարձնել:			
		Ետկառուցման փուլ 1) Մեղրիի համայնքապետի հետ խորհրդակցելով նշանակված տարածքներում տնկել 8100 ծառի տնկի և ապահովել դրանց հետագա խնամքը երկու տարվա ընթացքում (հետագա խնամքը կարող է տևել մինչև ջրամբարի շահագործման փուլը):			
Տարածքի մաքրում, հողային և փորման աշխատանքներ, շինարարական տեխնիկայի և ծանր բեռնատարների շահագործում, հանքի փորման աշխատանքներ, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ, շինարարական նյութերի և հողային մնացորդների պահեստավորում և այլն	Ազդեցությունը երկրաբանության վրա (8.2.6)	1) Ջրահեռացման ուղիներ կամ արհեստական պատնեշներ՝ մշակված տարածքներից մակերեսային հոսքը շեղելու համար, 2) Հողի պատշաճ հարթեցում՝ թեքությունները կայունացնելու և ջրի հոսքը վերահսկվող ուղղությամբ ուղղորդելու նպատակով, 3) Թեքության ընդհատման սարքեր՝ երկար թեքությունները բաժանելու ավելի փոքր հատվածների՝ Էրոզիայի հավանականությունը նվազեցնելու համար,	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Շինարարական նյութերի և հողային մնացորդների պահեստավորման տարածքների ստուգումները պարբերաբար իրականացվում են, իսկ նստվածքի վերահսկման միջոցառումները արդյունավետորեն պահպանվում են՝ ապահովելու համար երկրաբանական պայմանների կայունությունը Ծրագրի տարածքում:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>4) Փուլային շինարարություն՝ միաժամանակյա հողի փորման աշխատանքների սահմանափակման նպատակով,</p> <p>5) Հնարավորության դեպքում խուսափել հողային աշխատանքների իրականացումից անձրևային եղանակներին՝ էրոզիայի ռիսկը նվազեցնելու համար:</p>			
Տարածքի մաքրում, հողային և փորման աշխատանքներ, շինարարական տեխնիկայի և ծանր բեռնատարների շահագործում, հանքի փորման աշխատանքներ, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ, շինարարական նյութերի և հողային մնացորդների պահեստավորում և այլն	Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա (8.2.7)	<p>Ջրի աղտոտում</p> <p>1) Կառուցել միջանկյալ հավաքման ավազաններ՝ մակերևութային հոսք առաջացնող տարածքների և ջրային հոսանքների միջև՝ ջրի հոսքը ջրային մարմիններ ուղղորդելու և կարգավորելու նպատակով: Այս ավազանները թույլ կտան հողային մասնիկներին նստել հատակին՝ նվազեցնելով հոսքի պոտորությունը,</p> <p>2) Սահմանափակել հողային և փորման աշխատանքները Մեղրի գետի Լիճք վտակի մոտ՝ անձրևային եղանակներին,</p> <p>3) Արգելել չմաքված կեղտաջրերի արտահոսքը մակերևութային ջրեր,</p> <p>4) Հնարավորության դեպքում կառուցել տեղային շրջանցող ջրահեռացման համակարգեր աշխատանքային տարածքների</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Մակերևութային ջրերի որակը պահպանվում է և շինարարական աշխատանքներից առաջացող բացասական ազդեցությունները նվազեցվում են՝ մեղմացման միջոցառումների կիրառման միջոցով:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		շուրջ (օրինակ՝ պահեստավորման և կայանման գոտիներում)՝ կախված հոսքը հավաքելու և այն մակերևութային ջրային ռեսուրսներ արտահոսումը կանխարգելելու նպատակով:			
Վերին հողի շերտի հեռացում, պահեստավորում, տեղափոխում, կրկնակի օգտագործում, բեռնման և բեռնաթափման աշխատանքներ: Հանված հողերի, շինարարական և վտանգավոր նյութերի, այդ թվում՝ նավթամթերքների տեղափոխում, պահեստավորում և օգտագործում, ինչպես նաև շինարարական տեխնիկայի և բեռնատարների լիցքավորում: Շինհրապարակում դաշտային աշխատանքների ընթացքում փխրուն նյութերի պատահական թափումներ, նավթի, վառելիքի և այլ հեղուկ	Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա (8.2.8)	Բուսահողի կառավարում 1) Իրականացնել բուսահողի հեռացումը, տեղափոխումը, պահեստավորումը և օգտագործումը՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 1396-Ն և թիվ 1404-Ն որոշումների, 2) Բուսահողը պահեստավորել առանձին՝ խուսափելու համար այն այլ հողային զանգվածի հետ խառնվելու և դրա սերմերի վերականգման բնական հատկությունը պահպանելու նպատակով՝ մինչև շինարարական աշխատանքների ավարտը, 3) Բուսահողի կույտերը տեղակայել ջրային հոսանքներից առնվազն 50 մ հեռավորության վրա՝ ջրի ֆիլտրացիոն կորուստներից խուսափելու համար, 4) Խուսափել բուսահողի կույտերը պլանավորված հողային աշխատանքների տարածքին մոտ տեղակայելուց, 5) Կույտերի բարձրությունը սահմանափակել առավելագույնը	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Բուսահողի կառավարման պլանի դրույթները իրականացվում և վերահսկվում են:	Ի - Կառուցման կապալառու որակավորված մասնագետի աջակցությամբ: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
քիմիական նյութերի արտահոսքեր:		<p>3 մետրով և ավելով, որ թեքության անկյունը չգերազանցի 25°-ը,</p> <p>6) Բուսահողի բոլոր կույտերը հստակ պիտակավորել՝ հեշտ ճանաչելիության համար,</p> <p>7) Հողի էրոզիայից խուսափելու նպատակով բուսահողի կույտերը ծածկել, սակայն այն տարածքներում, որտեղ հողի բնական վերականգնում չի արձանագրվել,</p> <p>8) Բուսահողի կույտերը ցանկապատել՝ Ծրագրի տրանսպորտային միջոցների կողմից չարտոնված մուտքից և հողի խտացումից խուսափելու համար,</p> <p>9) Պահեստավորված բուսահողը վերօգտագործել խախտված տարածքների բարեկարգման և/կամ Ծրագրի տարածքում ծառատունկի իրականացման նպատակով՝ ջրամբարի և պատնեշի շինարարության ավարտից հետո:</p> <p>Վտանգավոր նյութեր</p> <p>1) Վտանգավոր բոլոր նյութերը պահեստավորել հստակ պիտակավորված, անվտանգ և օդափոխվող տարածքներում,</p> <p>2) Վտանգավոր նյութերի տարաները պետք է հստակ պիտակավորված լինեն՝ ըստ</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>պարունակության և վտանգավորության,</p> <p>3) Տարածքները հագեցնել արտահոսքի արձագանքման հավաքածույով և աշխատակիցներին վերապատրաստել արտակարգ իրավիճակների արձագանքման հարցում,</p> <p>4) Վտանգավոր բոլոր նյութերի համար տարածքում պահպանել նյութերի մնվածության Տվյալների Թերթիկներ (ՆԱՏԹ),</p> <p>5) Անհամատեղելի վտանգավոր նյութերը չպետք է պահվեն միասին,</p> <p>6) Վտանգավոր նյութերի պահեստավորման տարածքները պետք է հագեցած լինեն աչքի լվացման հավաքակաճուներով և հրդեհաշիջման միջոցներով,</p> <p>7) Օգտագործել համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ):</p> <p>Հողի աղտոտում</p> <p>1) Տեղափոխել փխրուն նյութերը՝ օգտագործելով ջրադիմացկուն ծածկերով կահավորված բեռնատարներ,</p> <p>2) Շինարարական և այլ սորուն նյութերը պահեստավորել առանձին հատկացված, ցանկապատված</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>տարածքներում՝ անջրաթափանց ծածկով,</p> <p>3) Նավթամթերքները և քիմիական նյութերը պահել առանձին՝ հատուկ տարաներում կամ բաքերում, որոնք տեղադրված են երկրորդային պահման վայրերում կամ տակդիրների վրա (տարայի ծավալի 110%-ի չափով),</p> <p>4) Նավթամթերքների, վառելիքի և այլ քիմիական նյութերով լիցքավորումը իրականացնել միայն հատուկ պատրաստված պաշտպանիչ պատնեշների վրա,</p> <p>5) Նավթամթերքների և քիմիական նյութերի պահեստավորման տարածքները, ինչպես նաև այդ նյութերը տեղափոխող բեռնատարները հագեցնել համապատասխան արտահոսքի հավաքման հավաքածուներով,</p> <p>6) Վառելիքի, շարժիչի յուղի կամ քիմիական նյութերի պատահական արտահոսքի դեպքում անմիջապես դադարեցնել աշխատանքները: Աղտոտված հողը վերականգնել՝ հեռացնելով վնասված շերտը (որն ենթակա է վտանգավոր թափոնի կարգավիճակի) և փոխարինելով այն մաքուր հողով,</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>7) Աշխատակիցներին վերապատրաստել շինարարական աշխատանքների անվտանգ իրականացման և շրջակա միջավայրի հետ կապված արտակարգ դեպքերին արձագանքելու ընթացակարգերի վերաբերյալ,</p> <p>8) Կուտակված հողային զանգվածի կույտերի բարձրությունը չպետք է գերազանցի 3 մետրը, իսկ թեքության անկյունը՝ 25°-ը: Կույտերը կառավարել՝ երոզիայից և ջրի հոսքից խուսափելու նպատակով:</p>			
Շինարարության փուլում թափոնների առաջացման հետ կապված բոլոր գործընթացներն ու գործողությունները	Թափոնների առաջացում և կառավարում (8.2.9)	<p>Հիմնական</p> <p>1) Վերապատրաստել թափոնների կառավարմամբ զբաղվող աշխատակիցներին՝ ԹԿՊ-ի դրույթների վերաբերյալ,</p> <p>2) Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կիրառել թափոնների կառավարման մոտեցումը (կանխարգելում, նվազեցում, վերօգտագործում, վերամշակում, վերականգնում, հեռացում),</p> <p>3) Մշակել և կիրառել շինարարական աշխատանքների համար թափոնների հավաքման և մշակման ընթացակարգեր,</p> <p>4) Շինհրապարակն ու շինարարական ճամբարները</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	Ջրամբարի շինարարության փուլում թափոնների կառավարումը պետք է իրականացվի գործող ազգային օրենսդրության, թափոնների հիերարխիայի սկզբունքների և լավ միջազգային փորձի համաձայն:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՇԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>համալրել թափոնների առանձին հավաքման / պահեստավորման տարաներով և վայրերով,</p> <p>5) Թափոնների պահեստավորման / հավաքման տարածքները կահավորել ցանկապատերով, հրդեհաշիջման սարքավորումներով, երկրորդային կուտակման տարաներով, նավթային և քիմիական նյութերի արտահոսքի մաքրման հավաքածուներով և այլն,</p> <p>6) Հեղուկ թափոնները պահեստավորել հերմետիկ փակվող, արտահոսքից պաշտպանված տարաներում,</p> <p>7) Պայմանագրեր կնքել արտոնագրված թափոնների կառավարման (վերամշակում, մշակում, հեռացում) ընկերությունների հետ՝ առաջացած թափոնները նրանց փոխանցելու նպատակով:</p> <p>Թափոնների տեղափոխում</p> <p>1) Բոլոր տեսակի թափոնները տեղափոխել համապատասխան, հերմետիկ փակվող և ծածկված բեռնատարներով՝ ճանապարհներին և շրջակա միջավայրում դրանց արտահոսքից խուսափելու նպատակով,</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>2) Արգելել թափոնների տեղադրումը տեղափոխման երթուղու երկայնքով և/կամ դրանց հեռացումը չարտոնագրված վայրերում,</p> <p>3) Թափոնների առաջացման վայրից դրանց պահեստավորման և վերամշակման / հեռացման վայր տեղափոխման համար կընտրվեն նվազագույն ռիսկ պարունակող երթուղիները,</p> <p>4) Թափոնների տեղափոխմամբ զբաղվող վարորդներին հրահանգել թափոնների տեղափոխման անվտանգության կանոնների վերաբերյալ,</p> <p>5) Ներառել թափոնների տեղափոխման հոսքերը Երթևեկության Կառավարման Պլանի (ԵԿՊ) մեջ:</p> <p>Կենցաղային թափոնների կառավարում</p> <p>1) Շինհրապարակը կահավորել կենցաղային թափոնների հավաքման տարաներով / աղբամաններով,</p> <p>2) Պայմանագիր կնքել համայնքային կազմակերպության հետ՝ շինհրապարակից և շինարարական ճամբարներից կենցաղային թափոնների կանոնավոր հեռացման համար:</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		Վերը նշված միջոցառումների լրացման նպատակով՝ պարտադիր դարձնել անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործումը, մասնավորապես՝ թափոնների հետ աշխատող աշխատակիցների համար պաշտպանիչ հագուստի, կոշիկների, ձեռնոցների, շնչառական սարքերի / դիմակների կիրառումը:			
Շինհրապարակի մաքրում, հողային և փորման աշխատանքներ, շինարարական տեխնիկայի և ծանր բեռնատարների շահագործում, քարհանքերի շահագործում, բեռնման-բեռնաթափման աշխատանքներ և այլն:	Աղմուկի և թրթռման ազդեցությունը (8.2.10)	<p>1) Բոլոր դիզելային շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցներն ու սարքավորումները (օրինակ՝ գներատորներ և օդային կոմպրեսորներ) պահել բարձր տեխնիկական վիճակում: Սա մասնավորապես ներառում է մուտքային և արտանետման ձայնամեղմիչների պարբերական ստուգումն ու անհրաժեշտության դեպքում՝ փոխարինումը,</p> <p>2) Պարբերաբար օգտագործվող տեխնիկական / տրանսպորտային միջոցները պետք է անջատվեն կամ աշխատեն նվազագույն իզոլացիայով՝ երբ դրանք չեն աշխատում,</p> <p>3) Հնարավորության դեպքում՝ պարփակել աղմուկ առաջացնող սարքավորումները, սահմանափակել դրանց անընդհատ աշխատանքը, խուսափել աղմուկ առաջացնող սարքավորումների</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Շինարարական աշխատանքներից առաջացող աղմուկի և թրթռումների ազդեցությունները արդյունավետորեն վերահսկվում են՝ թույլատրելի մակարդակների գերազանցումը կանխելու և մոտակա ընկալիչների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով: Աղմուկի և թրթռումների մոնիտորինգի պլանը իրականացվում է:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>միաժամանակյա շահագործումից,</p> <p>4) Խուսափել տեխնիկայի անհարկի դանդաղ ընթացքից (դատարկ աշխատեցումից),</p> <p>5) Նվազեցնել սարքավորումների հետընթաց շարժի անհրաժեշտությունը՝ նվազեցնելու համար հետընթացի ազդանշանային ձայների հաճախականությունը,</p> <p>6) Խուսափել շինարարական տեխնիկայի անհարկի ազդանշաններից (ձայնային ազդանշան),</p> <p>7) Սահմանափակել բեռնատարների արագությունը՝ համայնքային ճանապարհներով երթևեկելիս չգերազանցելով 40 կմ/ժ,</p> <p>8) Ջրամբարի պատվարից ներքև գտնվող ամառանոցների բնակիչներին տեղեկացնել պայթեցման աշխատանքների ժամանակացույցի և տևողության մասին,</p> <p>9) Ծանր բեռնատարների շարժը համայնքային ճանապարհներով բնակելի տարածքների մոտ արգելվում է ժամը 22:00-ից մինչև 06:00-ն ընկած ժամանակահատվածում:</p> <p>Վերոնշյալ միջոցառումների լրացման նպատակով՝</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>1) Պարտադիր դարձնել անհատական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործումը, մասնավորապես՝ այնպիսի պաշտպանիչ միջոցների, որոնք ունակ են նվազեցնել ականջի մոտ աղմուկի մակարդակը՝ հասցնելով այն ընդունելի սահմանների,</p> <p>2) Աղմկոտ աշխատանքներ իրականացնող աշխատակիցներին տրամադրել լրացուցիչ 15 րոպեանոց կանոնակարգված ընդմիջում՝ յուրաքանչյուր 2 ժամ աշխատանքից հետո:</p>			
Շինանյութերի, նավթամթերքների և աշխատողների տեղափոխում	Ազդեցությունը երթևեկության վրա (8.2.11)	<p>1) Կառուցել մոտեցման/մուտքի ճանապարհները՝ համաձայն Ծրագրի նախագծային փաստաթղթում նախատեսվածի,</p> <p>2) Իրականացնել երթևեկության Կառավարման Պլանը,</p> <p>3) Ծանր տեխնիկայի վարորդներին վերապատրաստել երթևեկության կառավարման պլանի հիմնական պահանջների վերաբերյալ, Տեղեկացնել տեղի բնակիչներին սպասվող շինարարական երթևեկության ազդեցությունների մասին՝ շինարարության մեկնարկից առնվազն երկու շաբաթ առաջ,</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ճանապարհային ռիսկերը նվազեցվում են ԵԿՊ-ի արդյունավետ իրականացման, վարորդների ուսուցողական ծրագրերի, ճանապարհների անվտանգության հստակ ցուցանակների և իրազեկող պաստառների տեղադրման միջոցով և այլն:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		<p>4) Տեղի բնակիչներին տեղեկացնել շինարարության մեկնարկից առնվազն երկու շաբաթ առաջ սպասվող շինարարական երթևեկության ազդեցության մասին և տրամադրել տեղեկատվություն Բողոքարկման Մեխանիզմի (ԲՄ) մասին,</p> <p>5) Ծրագրի տրանսպորտային միջոցների վրա տեղադրել ԲՄ կոնտակտային տվյալները, Ծրագրի տրանսպորտային միջոցների կողմից օգտագործվող ճանապարհները հազեցնել համապատասխան ճանապարհային անվտանգության նշաններով և պաստառներով,</p> <p>6) Անհրաժեշտության դեպքում ապահովել լրացուցիչ անցումներ անասունների համար:</p>			
Տարածքի մաքրման և բուսականության հեռացում:	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Բուսականություն</p> <p>4) Տնկել 8100¹⁸ ծառ և ապահովել դրանց հետագա խնամքը երկու տարի ժամկետով (խնամքը կարող է իրականացվել ջրամբարի շահագործման փուլում):</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	1300 ծառ տնկվում և պահպանվում են:	ՄԱԻ - Կառուցման կապալառու Վ - Վերահսկող ինժեներ Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ), ՎՁԵԲ

¹⁸Համաձայն ազգային ՇՄՍԱԳ ուսումնասիրության շրջանակներում կատարված հաշվարկների՝ որպես փոխհատուցող միջոցառում պետք է տնկվեն ծառեր հետևյալ հարաբերակցությամբ՝ 1:1, երբ հատված ծառի բնի տրամագիծը (D) <10 սմ է, և 1:5, երբ D >10 սմ է: Տնկման եկթալա ծառերի քանակն է՝ $850 \times 1 + 1450 \times 5 = 8100$: Ընդհանուր բազմապատկիչը կազմում է 3,52 (8100/2300): Միևնույն ժամանակ, քանի որ 2300 կորսվող ծառերը չեն պատկանում առաջնահերթ պահպանվող տեսակներին, «զուտ կորստի բացակայության» և «զուտ օգուտի» մոտեցումների կիրառումը պարտադիր չէ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		Տնկման համար առաջարկվող ¹⁹ ծառատեսակները ներառում են. <ul style="list-style-type: none"> - Կաղնի արևելյան- <i>Quercus macranthera</i> Fisch. et Mey., - Կաղնի վրացական- <i>Quercus iberica</i> Stev., - Բոխի սովորական - <i>Carpinus betuleus</i> L., - Թխկի հիրկանյան - <i>Acer hyrcanum</i> Fisch. et Mey., - Թխկի վրացական- <i>Acer ibericum</i> M. Bieb., - Թխկի դաշտային- <i>Acer campestre</i> L., - Հացենի բարձր- <i>Fraxinus excelsior</i> L., - Խնձորենի արևելյան- <i>Malus orientalis</i> Uglitzkich, - Ուռենի բարձր- <i>Salix excelsa</i> S.G. Gmel., - Ուռենի դեղնաճյուղ- <i>Salix purpurea</i> L. - Սալորենի սովորական- <i>Prunus divaricate</i> Ldb. 			
Տարածքի մաքրման և բուսականության հեռացում: Հողային և փորման աշխատանքներ: Կառուցման կապալառույի	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Կենդանական աշխարհ 1) Նախքան կառուցման աշխատանքները (ներառյալ ծառահատումը) և ջրամբարի ջրածածկումը սկսելը, օգտագործել ձայնային տիրույթի աղմուկ՝ չդժիկներին վանելու	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը կենդանական աշխարհի տեսակների վրա նվազեցվում և/կամ մեղմացվում է:	ՄԱԻ - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:

¹⁹Առաջարկված է ՇՄԱԳ ազգային ուսումնասիրության մեջ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
աշխատողների վարքագիծ:		<p>համար, և իրականացնել նրանց վերաբնակեցման մշտադիտարկում,</p> <p>2) Ծառահատման մեկնարկից սկսած՝ իրականացնել տարածքը լքող չղջիկների մշտադիտարկում և հետևել նրանց վերաբնակեցմանը հարակից տարածքներում,</p> <p>3) Պլանավորել և սկսել կառուցման աշխատանքները (ներառյալ ծառահատումը) ամբարտակի տարածքի մի եզրից՝ առաջանալով հովտի երկայնքով. այս մոտեցումը թույլ կտա կենդանիներին լքել տարածքը,</p> <p>4) Կառուցման աշխատանքները սկսել բնադրման/բազմացման շրջանից առաջ կամ հետո՝ մինչև ապրիլը կամ օգոստոսից հետո. սա կպաշտպանի կենդանիների, այդ թվում՝ սերնդի կյանքը,</p> <p>5) Սահմանափակել պայթուցիկ լիցքերի քանակը՝ հասցնելով կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ նվազագույնին. պայթեցման աշխատանքների ժամանակ կիրառել անվտանգության բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ազդեցության ենթակա տարածքը նվազագույնի հասցնելու համար,</p>			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		6) Իրականացնել կառուցապատող ընկերության աշխատակիցների կողմից Աշխատողների վարքագծի կանոնագրի պահպանման մշտադիտարկում՝ որսագողությունը կանխելու նպատակով:			
Տարածքի մաքրման և բուսականության հեռացում: Հողային և փորման աշխատանքներ: Կառուցման կապալառույի աշխատողների վարքագիծ:	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Նստակյաց կենդանիներ 1) Նախքան ջրամբարի տարածքում ծառահատումներ իրականացնելը, զննել ծառերը՝ Անտառային քնամուլի և մողեսների ու օձերի առաջնահերթ տեսակների առկայությունը ստուգելու համար: Հայտնաբերված բոլոր առանձնյակներին որսալ և տեղափոխել նախակառուցման փուլում նույնականացված անվտանգ կենսամիջավայրեր, 2) Նախքան ջրամբարի ջրածածկումը, հետազոտել տարածքը և որսալ հնարավորինս շատ առանձնյակների, այդ թվում՝ Անտառային քնամուլի (եթե դեռ առկա են), օձերի ու մողեսների, և վերաբնակեցնել նրանց նախակառուցման փուլում նույնականացված և/կամ նախապատրաստված անվտանգ կենսամիջավայրերում,	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը նստական կենդանիների վրա կանխարգելվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՄԱԻ - Մասնագիտացված ընկերություն և/կամ Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		3) Նախքան ջրամբարի ջրածածկումը, զննել Գորշուկի և այլ կենդանիների քարտեզագրված բնակեցված բները. եթե առկա են առանձնյակներ, որսալ նրանց և տեղափոխել անվտանգ կենսամիջավայրեր:			
Թռչունների տեսակների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Թռչուններ Տնկված ծառերն ու թփերի տեսակները պետք է պահպանվեն:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	Ծրագրի ազդեցությունը թռչունների վրա կանխվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՄԼԻ - Կառուցման կապալառու Վ - Վերահսկող ինժեներ Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ), ՎԶԵԲ
Անողնաշարավոր կենդանիների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Անողնաշարավորներ Պահպանել ստեղծված կենսամիջավայրերը, հատկապես տեսակների համար կերային հանդիսացող բույսերը:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	Ծրագրի ազդեցությունը անողնաշարավորների վրա կանխվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՄԼԻ - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:
Շինարարական աշխատանքների ընթացքում պատահարներ և միջադեպեր:	Հանրային օբյեկտների և ենթակառուցվածքների վրա ազդեցություններ (8.3.2)	1) Պարտավորեցնել կառուցման կապալառուին բժշկական կետ հիմնել աշխատանքային կացարաններից առնվազն մեկում: 2) Հաշվի առնել շինհրապարակում շտապօգնության մեքենա ունենալու անհրաժեշտությունը կամ պայմանագիր կնքել Մեղրի բժշկական կենտրոնի հետ՝ կապալառուի աշխատողների համար բժշկական	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ճամբարում առկա է բժշկական կետ:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		ծառայությունների անհրաժեշտության դեպքում շտապ օգնության ցուցաբերումն ապահովելու համար:			
Շահառուների ներգրավման գործընթաց, աշխատողների հավաքագրում և վարձատրություն շինարարական աշխատանքների ընթացքում:	Ազդեցություն խոցելի խմբերի վրա (8.3.4)	<p>1) Իրագործել ՇՆՊ-ը ապահովելու համար, որ Ծրագրի և դրա հնարավորությունների մասին տեղեկատվությունը լայնորեն հասանելի լինի և հաղորդվի խոցելի, այդ թվում՝ կանանց գլխավորությամբ և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տարեց, ինչպես նաև աղքատության գծից ցածր գտնվող տնային տնտեսություններին,</p> <p>2) Ապահովել, որ խոցելի տնային տնտեսությունները հասանելիություն ունենան Ծրագրին վերաբերող տեղեկատվությանը և ՏՊ իրականացման գործընթացներին,</p> <p>3) Ծրագրի շինարարության փուլում պետք է ապահովվեն տղամարդկանց և կանանց համար հավասար զբաղվածության և վճարման հնարավորություններ:</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրի ՇՆՊ-ն արդյունավետորեն իրականացվում է: Շահառուների ներգրավում խոցելի խմբերի մասնակցությամբ, արդար հավաքագրում և հավասար վարձատրություն շինարարական աշխատանքների ընթացքում:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎԶԵԲ:
Արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են սողանքները,	Հանրային առողջության և անվտանգության վրա ազդեցությունը (8.3.5)	Իրագործել Արտակարգ իրավիճակներին Պատրաստվածության և	Ծրագրի Կառուցման կապալառուի	ԱԻՊԱՊ-ը արդյունավետորեն իրականացվում է:	Ի - Կառուցման կապալառու:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
Երկրաշարժերը, միջադեպերը, թափվածքները և արտահոսքերը:		Արձագանքման Պլանը (ԱԻՊԱՊ) (տես կետ 8.4):	պայմանագրի շրջանակներում:		Վ - Վերահսկող ինժեներներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:
Շինարարական գործունեության ընթացքում իրականացվող բոլոր գործընթացներն ու գործողությունները:	Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում (8.3.6)	1) Իրականացնել ԱԱևԱՊԿՊ դրույթները, 2) Կատարել շինհրապարակի կանոնավոր աուդիտներ՝ կապալառուների ԱԱևԱՊ ցուցանիշների մշտադիտարկման նպատակով:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Համապատասխանություն գործող ազգային օրենսդրությանը և ՄԼԳ-ին՝ ԱԱևԱՊ պահանջների վերաբերյալ:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:
Գործառնություններ և գործունեություն, որոնք առնչվում են աշխատանքի և աշխատանքային պայմանների հետ կապված ազդեցություններ (8.3.7)	Աշխատողների իրավունքների և աշխատանքային պայմանների հետ կապված ազդեցություններ (8.3.7)	1) Սահմանել և պահպանել բողոքարկման մեխանիզմները, որոնք հասանելի կլինեն Ծրագրի ամբողջ աշխատուժին, ներառյալ անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորությունը, 2) Եթե նախատեսվում է լայնածավալ սպասարկում, պարտավորեցնել սպասարկման կապալառուին մշակել Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան և աշխատողների վարքագծի կանոնագիրք (անհրաժեշտության դեպքում)՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսդրության և ՎՁԵԲ ԻՊ2-ի, ցանկացած սպասարկման աշխատանքներից առնվազն մեկ ամիս առաջ և իրականացնել դրանք:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Համապատասխանություն գործող ազգային օրենսդրությանը, ՎՁԵԲ-ի ԻՊ2-ին և ՄԼԳ-ին՝ աշխատանքի և աշխատանքային պայմանների վերաբերյալ:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ), ՎՁԵԲ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
Աշխատողների և ազդեցության ենթարկված բնակավայրերի բնակիչների միջև փոխազդեցություններ	Գեոդերային բռնություն և ոտնձգություն (8.3.8)	<ol style="list-style-type: none"> 1) Կազմակերպել պարտադիր և պարբերական ուսուցումներ աշխատողների համար՝ բնակավայրերում օրինական վարքագծի պահանջների, վարքականոսի և ԳԲՈ քաղաքականության վերաբերյալ, ինչպես նաև դրանց անհամապատասխանության հետևանքների մասին, 2) Պահպանել բողոքարկման մեխանիզմը, որը ներառում է ԳԲՈ վերաբերյալ հատուկ մանդատ, 3) Կազմակերպել տեղեկատվական և իրազեկման արշավներ համայնքի անդամների, հատկապես կանանց և աղջիկների համար, 4) Համայնքներին տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարելի է օգտագործել բողոքների մեխանիզմը՝ ԳԲՈ խնդիրների մասին հաղորդելու համար: 	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Բոլոր աշխատողները պարտադիր անցնում են նախնական ուսուցում և պարբերաբար թարմացնող վերապատրաստում՝ վարքագծի կանոնակարգի, ԳԲՈ քաղաքականության և տեղական համայնքում ակնկալվող վարքագծի վերաբերյալ:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:
Արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են սողանքները, երկրաշարժերը, միջադեպերը, արտահոսքերը և ճեղքվածքները	Արտակարգ իրավիճակներ և արձագանք (8.4)	<ol style="list-style-type: none"> 1) Հրդեհաշիջման միջոցները և առաջին բուժօգնության պարագաները պետք է հասանելի լինեն և պահպանվեն բոլոր շինհրապարակներում և ծրագրին առնչվող մեքենաներում: Ընտրված աշխատողները պետք է 	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Բոլոր շինարարական հարթակները համալրված են համապատասխան հրդեհաշիջման միջոցներով: Չգուշացման համակարգերը և սարքավորումները պատշաճ կերպով տեղադրված,	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու/ վերահսկող կառույցներ ¹⁷
		վերապատրաստվեն դրանց օգտագործման վերաբերյալ, 2) Իրականացնել արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման պլան (տես նաև Բաժին 4.3.5), 3) Իրականացնել պատվարի ամբողջականության ռիսկի գնահատում, 4) Պատվարի ամբողջականության ռիսկի գնահատման և ջրիեղելի անվտանգության ստուգման ավարտից հետո դիտարկել վաղ նախագգուշացման համակարգի և տեղական համայնքներում փրկարարական սարքավորումների ապահովման անհրաժեշտությունը՝ պարբերաբար սպասարկման և արտակարգ իրավիճակներում տարհանման վարժանքների պահանջով, 5) Մշակել երթևեկության և մուտքի կառավարման պլաններ՝ աշխատողների և տեղի բնակիչների համար վթարների ռիսկերը նվազեցնելու համար:		պահպանված և գործառնական են (անհրաժեշտության դեպքում):	
				Պատվարի ամբողջականության ռիսկի գնահատումը անցկացված է, պատվարի ամբողջականության ռիսկերը գնահատված են, նախագգուշացման համակարգերն ու սարքավորումները պլանավորված են և տեղում:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՇԵԲ:
Հողային և փորման աշխատանքներ, քարհանքերի շահագործում,	Ազդեցությունն նյութական մշակութային ժառանգության վրա (8.5.1)	1) Իրագործել ՊԳԸ, 2) Պարբերաբար իրահանգավորել պատմամշակութային ժառանգության մեղմացմանը ներգրաված աշխատողներին:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Աշխատակազմը պատշաճ կերպով վերապատրաստված է և տեղեկացված է ՊԳԸ-ի	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿԴ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ¹⁷
Էլեկտրահաղորդման գծերի կառուցում և այլն:				դրույթների ու պահանջների մասին:	Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:
Ազդակիր բնակավայրերի ավանդական և մշակութային ինքնությունը ներկայացնող ծեսեր, արարողություններ և տոնակատարություններ:	Ազդեցություն ոչ նյութական մշակութային ժառանգության վրա (8.5.2)	Լիճք գյուղական բնակավայրի բնակչությանը տեղեկացնել երթևեկության կառավարման պլանի դրույթները՝ նրանց օգնելու Սուրբ Ծնունդը, Նոր տարին, Չատիկը, Տրնդեզը, հարսանիքները և այլ տոնակատարությունները պլանավորելու և լրացուցիչ անհարմարություններից խուսափելու համար:	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում:	Ծրագրից ազդակիր բնակավայրերի բնակիչները տեղեկացված են և իրազեկված են ճանապարհային երթևեկության կառավարման պլանի դրույթների և հնարավոր անհարմարությունները նվազեցնելու նպատակով առաջարկված միջոցառումների մասին:	Ի - Կառուցման կապալառու: Վ - Վերահսկող ինժեներ: Պ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
Բաժին Գ - ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ՍՊԱՍԱՐԿՄԱՆ) ՓՈԽԼ					
Ջրամբարի մարմնի, պատվարի և օժանդակ ենթակառուցվածքների կանոնավոր սպասարկում	Օդի որակի վրա ազդեցությունը (8.2.4)	Պահպանման աշխատանքներ 1) Օգտագործել ժամանակակից շինարարական տեխնիկա՝ առնվազն Euro IV ստանդարտներին համապատասխան շարժիչներով, արտանետումների վերահսկման համակարգերով և ցածր աղմուկային բնութագրերով,	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	Օգտագործվում է միայն ժամանակակից և պատշաճ կերպով սպասարկված շինարարական տեխնիկա:	Ի - Օպերատոր («Ջրար» ՓԲԸ) կամ ներգրավված կապալառու: Վ - ՀՀԶԿ/ԾԻԳ Պ - Պետական տեսչական մարմին

²⁰Մ-մշակում, Ի-իրականացում, Հ-հաստատում, Վ-վերահսկում, Ս-մշտադիտարկում, Շ-շահագործում

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (Եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<p>2) Կատարել շինարարական տեխնիկայի կանոնավոր տեխնիկական սպասարկում,</p> <p>3) Եթե սպասարկման ծառայությունները պատվիրակվում են երրորդ կողմի, կապալառուները պետք է օգտագործեն ժամանակակից, լավ պահպանված տեխնիկա, որը համապատասխանում է բոլոր կիրառելի տեխնիկական պահանջներին:</p>			
Տեխնիկական և սպասարկման միջոցառումներ, որոնք հնարավոր է ներառել Ծրագրի նախագծային փաստաթղթերում	Օդի որակի վրա ազդեցությունը (8.2.4)	<p>Հետևյալ տեխնիկական միջոցառումները պետք է ներառվեն Ծրագրի նախագծային փաստաթղթերում, ինչպես նաև ջրամբարների սպասարկման և շահագործման պլաններում:</p> <p>1) Դիտարկել ջրի աերացիոն համակարգերի կիրառումը՝ թթվածնով հարստացման և անաերոբ մեթանի արտադրության նվազեցման նպատակով</p> <p>2) Տեղադրել մակերեսային աերատորներ կամ ցրված օդային համակարգեր՝ թթվածնի մակարդակը բարձրացնելու համար</p> <p>3) Հեռացնել քայքայվող բուսական մնացորդները, մշակաբույսերի մնացորդները կամ աղբը՝ ջրամբարից և մուտքային հոսքերից</p>	Կարող է ներառվել վարկային համաձայնագրում, եթե համարվի նպատակահարմար Ծրագրի համար:	Առաջարկված սարքավորումները տեղադրված և շահագործվում են, մաքրման և մշակման միջոցառումները իրականացվում են:	Ի - Մասնագիտացված կապալառու Շ - Օպերատոր Վ - ՀՀԶԿ/ԾԻԳ

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (Եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<p>4) Պահել ջրամբարի ափերը և մուտքային ջրանցքները մաքուր՝ օրգանական բեռնվածությունը նվազեցնելու նպատակով</p> <p>5) Ստեղծել բուսածածկ բուժերային գոտիներ՝ սննդանյութերի կլանման համար՝ միևնույն դրանց հասնելը ջրամբարին:</p>			
Ծառերի տնկում՝ համաձայն Ծառերի կառավարման պլանի	Ազդեցությունը լանդշաֆտի և տեսողական միջավայրի վրա (8.2.5)	<p>Ապահովել տնկված ծառերի պահպանման և խնամքի իրականացումը երկու տարվա ընթացքում:</p> <p>Ժամանակի ընթացքում ջրամբարի շուրջ բնական վերականգնումը և բուսականության աճը կարող են մեղմել տեսողական ազդեցությունը և նպաստել տարածքի ներդաշնակ ինտեգրմանը շրջակա լանդշաֆտի մեջ:</p> <p>Եթե ջրամբարը լավ ինտեգրվի բնական լանդշաֆտի հետ, այն կարող է դրականորեն ազդել տարածքի ընդհանուր տեսողական պատկերի վրա:</p>	Ծրագրի Կառուցման կապալառուի պայմանագրի շրջանակներում	Ծառատնկման համար հատկացված տարածքը ծածկված է ծառատեսակներով:	Ի - Կառուցման կապալառուի կողմից ներգրավված մասնագիտացված ընկերություն: ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ազդակիր համայնք:
Գյուղատնտեսական հողերի պլանավորում, նախագծում և մշակություն՝ Լիճքի ջրամբարի նախատեսվող գործունեության տարածքում	Ազդեցություն մշակութային լանդշաֆտի վրա (8.2.5)	Խորհրդակցել ազդակիր բնակավայրերի ղեկավարների և հողատերերի հետ, ովքեր Ծրագրի իրականացման արդյունքում կստանան ոռոգման ջրի հասանելիություն, ժամանակակից մշակման և ոռոգման տեխնոլոգիաների վրա հիմնված պտղատու և խաղողի այգիների	-	Մեղրի համայնքի գյուղերի հողատերերն ու մշակողները պլանավորում և մշակում են իրենց գյուղատնտեսական հողամասերը՝ կիրառելով ժամանակակից,	Ի - Մեղրիի համայնքապետարան՝ ՀՀԶԿ, ԾԻԳ -ի աջակցությամբ: ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ):

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		հիմնման նախագծային լուծումների վերաբերյալ: <i>Սա կարող է օրգանականորեն զարգացած մշակութային լանդշաֆտը, որը բնութագրվում է ավանդական խաղողի այգիներով և պտղատու այգիներով, վերափոխել մշակված մշակութային լանդշաֆտի:</i>		ջրախնայող և կայուն գյուղատնտեսական ու ոռոգման մեթոդներ:	
Ջրամբարի ամբողջ ափամերձ հատվածում էրոզիա՝ շահագործման առաջին տարիներին ջրի ներթափանցման հետևանքով:	Ազդեցությունը երկրաբանության վրա (8.2.6)	<p>1) Կենսափոփոխական / Բուսական միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> - Տեղական խոտաբույսերի, թփերի և ծառերի տնկում՝ հողը արմատային համակարգերի միջոցով կայունացնելու և էրոզիան նվազեցնելու նպատակով, - Կենսաքայքայվող կամ սինթետիկ ծածկույթների օգտագործում, որոնք նպաստում են բուսականության աճին՝ միաժամանակ կանխելով հողի սկզբնական կորուստը: <p>2) Ափամերձ կայունացման միջոցառումներ</p> <ul style="list-style-type: none"> - Մեծ և դիմացկուն քարերի շերտերի տեղադրում խոցելի ափամերձ հատվածներում՝ ալիքային էներգիան ցրելու և էրոզիան կանխելու նպատակով, - Թեք կառուցվածքների տեղադրում ափերին՝ ներհոսող ջրի էներգիան կլանելու և շեղելու համար: 	Կարող է ներառվել վարկային համաձայնագրում, եթե համարվի նպատակահարմար Ծրագրի համար	Ափամերձ հատվածներում էրոզիան վերահսկելու համար առաջարկված մեղմացման միջոցառումները արդյունավետորեն իրականացվում են:	Ի - Մասնագիտացված կապալառու: ՎԼՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (Եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<p>3) Ջրամբարի շահագործման կառավարում</p> <ul style="list-style-type: none"> - Ջրամբարի աստիճանաբար լցում՝ ափամերձ հողերի կայունացման և հանկարծակի հագեցվածությունից խուսափելու նպատակով, - Շահագործման առաջին տարիներին խուսափել ջրի մակարդակի մեծ և արագ տատանումներից՝ նոր ափամերձ գոտիների ապակայունացումից զերծ մնալու համար: <p>4) Էրոզիայի մշտադիտարկում և հարմարվողական կառավարում</p> <ul style="list-style-type: none"> - Կանոնավոր մոնիտորինգ - դրոնների, ուսումնասիրությունների կամ արբանյակային պատկերների միջոցով՝ Էրոզիայի նախանշանների վաղ հայտնաբերման և մեղմացման միջոցառումների արդյունավետության գնահատման նպատակով, - Հարմարվողական կառավարման պլաններ - ափամերձ պաշտպանության միջոցառումների վերանայում և կատարելագործում՝ ընթացիկ մոնիտորինգի արդյունքների հիման վրա, - Էրոզիայի նկատմամբ զգայուն գոտիավորում - բարձր ռիսկային 			

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		տարածքների նույնականացում և այնտեղ խստացված պաշտպանիչ կամ ինժեներական միջոցառումների կիրառում:			
Ջրի աղտոտում	Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա (8.2.7)	<p>1) Նվազագույնի հասցնել Մեղրի գետի Արևիկ (Լիճք) վտակ թափվող անձրևաջրերի և գյուղատնտեսական հոսքաջրերի հնարավոր արտահոսքը՝ հետևյալ միջոցառումների միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> - բացահայտել հանքարդյունաբերական գործունեությունից (ներառյալ արտահոսքերը և հանքաջրերը) և մոտակա բնակավայրերից նախատեսված Լիճքի ջրամբար բոլոր հնարավոր մարդածին ներհոսքերը, - Վերլուծել ջրամբար մուտք գործող հնարավոր արտահոսքերը և գնահատել, թե արդյոք այդ ներհոսքերը կարող են զգալիորեն վատթարացնել ոռոգման համար նախատեսված ջրի որակը, - Անհրաժեշտության դեպքում կառուցել կեղտաջրերի շեղող ջրանցք ջրամբարի վերին հոսանքի պարագծի երկայնքով՝ աղտոտված ներհոսքերի ջրամբարի մարմին մուտքը կանխելու համար, 	-	Ջրամբար կեղտաջրերը հոսքը հասցվում է նվազագույնի կամ վերացվում է:	ԻԱՇ - Օպերատորը՝ ՋՕԸ և ազդակիր համայնքի հետ միասին: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<ul style="list-style-type: none"> - Բանակցել հանքարդյունաբերական ընկերությունների սեփականատերերի հետ առաջարկվող միջոցառումների համատեղ իրականացման վերաբերյալ: 			
Հիդրոլոգիական ռեժիմ		<p>1) Մշակել ոռոգման ջրի և Էկոլոգիական թողքերի բացթողումների կառավարման պլան՝ նպատակ ունենալով՝</p> <ul style="list-style-type: none"> - Ապահովել ոռոգման ջրի հուսալի և արդյունավետ մատակարարում գյուղատնտեսական տարածքներ, - Պահպանել նվազագույն Էկոլոգիական թողքեր՝ ջրամբարից ներքև գտնվող ջրային և ավազաններ Էկոհամակարգերի առողջությունը պահպանելու համար, - Կանխել ջրային ռեսուրսների գերշահագործումը և որակի վատթարացումը, - Համապատասխանել ջրօգտագործման ազգային կանոնակարգերին և բնապահպանական չափանիշներին: <p>2) Տարեկան վերանայել ոռոգման ջրի և Էկոլոգիական թողքերի բացթողումների կառավարման պլանը կամ խոշոր հիդրոլոգիական իրադարձություններից հետո՝ նոր</p>	-	Ոռոգման ջուրը մատակարարվում է օգտատերերին այնպես, որպեսզի ապահովվի նվազագույն Էկոլոգիական թողքը: Ջրամբարի շահագործման և սպասարկման պլանը մշակված է և իրականացվելու է շահագործման փուլում:	ԻԱԾ - Օպերատոր: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		տվյալները, կարգավորող փոփոխությունները և գործնական փորձը ներառելու նպատակով, 3) Ջրամբարի ցածր մակարդակի կամ ծայրահեղ երաշտային պայմանների դեպքում կիրառել առաջնահերթության արձանագրություն, որը ապահովում է էկոլոգիական թողքերի պաշտպանությունը՝ մինչև նախապես սահմանված նվազագույն շեմը, նախքան ջրի բաշխումը ոռոգման նպատակով:			
Ջրի կորուստներ		1) Մշակել ջրամբարի շահագործման և սպասարկման պլան, 2) Իրականացնել ջրամբարի օժանդակ ենթակառուցվածքների տեխնիկական սպասարկում՝ վթարներն ու խափանումները կանխելու նպատակով՝ համաձայն ջրամբարի սպասարկման պլանի, 3) Դիտարկել Լիճքի ջրամբարը Մեղրիի ինքնահոս գլխամասին միացնող 13 կմ երկարությամբ փակ խողովակաշար կառուցելու հնարավորությունը, որպեսզի կանխվի ջրի կորուստը, և տարեկան խնայվի մոտավորապես 1.0 մլն. մ3 ջուր:	-		
Ջրամբարի մարմնի, պատվարի և օժանդակ ենթակառուցվածքների կանոնավոր սպասարկում	Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա (8.2.8)	Գործող ջրամբարի պահպանման աշխատանքները պատվիրակել կապալառուներին, որոնք հագեցած	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Շահագործվում են միայն ժամանակակից և սպասարկվող	ԻԱՇ - Օպերատորը կամ վարձված կապալառու: Վ - ՀՀԶԿ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		Են ժամանակակից և տեխնիկապես սպասարկված սարքավորումներով:		շինարարական մեքենաներ:	Պ - Պետական տեսչական մարմին:
Թափոնների առաջացման բոլոր գործընթացներն ու գործողությունները շահագործման և սպասարկման աշխատանքների ընթացքում	Թափոնների առաջացում և կառավարում (8.2.9)	<ol style="list-style-type: none"> 1) Ստանալ ջրամբարների շահագործման հետ կապված բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և նորմատիվ փաստաթղթերը՝ համաձայն տեղական թափոնների կառավարման օրենսդրության (կարող է իրականացվել կորպորատիվ մակարդակով), 2) Մշակել և գործարկել ջրամբարի շահագործման և պահպանման համար Թափոնների Կառավարման Պլան (կարող է իրականացվել կորպորատիվ մակարդակով), 3) Կիրառել թափոնների կառավարման հիերարխիայի մոտեցումը (կանխարգելում, նվազեցում, վերօգտագործում, վերամշակում, վերականգնում, հեռացում)՝ առաջացած թափոնների համար, 4) Տարածքը կահավորել թափոնների հավաքման և պահեստավորման տարաներով և վայրերով, 5) Պայմանագրեր կնքել թափոնների հետ գործածության (վերամշակում, մշակում, հեռացում) լիցենզավորված ընկերությունների հետ՝ առաջացած թափոնները նրանց հանձնելու համար, 	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Ջրամբարի շահագործման փուլում թափոնների կառավարումը պետք է իրականացվի գործող ազգային օրենսդրության, թափոնների հիերարխիայի սկզբունքների և ՄԼԳ-ի համաձայն:	Մ,Ի,Լ,Ծ - Օպերատոր: Վ - ՀՀԶԿ: Պ - Պետական տեսչական մարմին:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		6) Պայմանագիր կնքել համայնքային կազմակերպության հետ՝ ջրամբարի տարածքից կենցաղային թափոնների կանոնավոր հեռացման համար:			
Բուսականության տեսակների և կենսամիջավայրերի պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Կենսամիջավայրեր Իրականացնել «Գետային կենսամիջավայրերի կառուցման պլանը». կառուցել և պահպանել հետևյալ կենսամիջավայրը (ԱԿՀ) ջրամբարի ափերի երկայնքով. <i>G1.11. Գետափնյա ուռուտային անտառներ (92A0 Salix alba/սպիտակ ուռենի և Populus alba/սպիտակ բարդի պատկերասրահային անտառներ):</i>	Կենսաբազմազանության պահպանության բյուջեի շրջանակներում:	Բոլոր առաջարկված մեղմացման միջոցառումները արդյունավետորեն իրականացվում են:	ՄԱԻ - Մասնագիտացված ընկերություն՝ ՀՀԶԿ/ԾԻԳ-ի միջոցով: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:
Բուսատեսակների և կենսամիջավայրերի պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Բուսականություն Կառուցել և պահպանել գետային կենսամիջավայրը ջրամբարի ափերի երկայնքով՝ հիմնվելով տեղական բուսատեսակների վրա (տես վերևում՝ սույն Աղյուսակը, Նախորդ տողը, Կենսամիջավայր):	Կենսաբազմազանության պահպանության բյուջեի շրջանակներում:	Կառուցվել և պահպանվում են գետային երկու կենսամիջավայրեր:	ՄԱԻ - Մասնագիտացված ընկերություն: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:
Օպերատորի աշխատողների վարքը	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Կենդանական աշխարհ 1) Մշակել Աշխատողների վարքագծի կանոնագիրը ջրամբարը շահագործող անձնակազմի համար՝ որսագողությունը կանխելու նպատակով, 2) Իրականացնել ջրամբարը շահագործողի կողմից Աշխատողների վարքագծի	-	Ջրամբարի օպերատորի անձնակազմը կանոնավոր մասնակցում է արտակարգ իրավիճակների արձագանքման ուսուցումներին և գործնական վարժանքներին, մշտապես օգտագործում է համապատասխան	ՄԱԻ - Մասնագիտացված ընկերություն: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ) և ՎԶԵԲ:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		կանոնագրի պահպանման մշտադիտարկում՝ շահագործման փուլում որսագողությունը կանխելու համար, 3) Իրականացնել ջրամբարի տարածքի հարակից գոտիներում բնակվող չոջիկների մշտադիտարկում:		անհատական պաշտպանիչ միջոցներ, իսկ ազդակիր բնակավայրերը ապահովված են անհրաժեշտ անվտանգության ցուցանակներով և սարքավորումներով:	
Բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև կենսամիջավայրերի պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Նստակյաց կենդանիներ 1) Ներդնել կամ աջակցել արոտավայրերի կայուն կառավարում ջրամբարի հարակից տարածքներում, քանի որ կենսամիջավայրերի որակի բարելավումը կարող է ապահովել սննդի ավելի բազմազան պաշար սողունների համար՝ այդպիսով նպաստելով պահպանվող օձերի և մողեսների տեսակների պոպուլյացիայի խտության աճին, 2) Պահպանել այն անտառային և ժայռային կենսամիջավայրերը, որոնք նախատեսված են ջրածածկվող տարածքի հարակից գոտիներում մնտառային քնամոլի, օձերի և մողեսների վերաբնակեցման համար: <u>Նախնական քանակական գնահատում</u> Բուժքերային/պաշտպանիչ գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 30,15 հա: Գյուղատնտեսական	Կենսաբազմազանության պահպանության բյուջեի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը նստակյաց կենդանիների վրա կանխվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՄԼԻ - Մասնագիտացված կազմակերպություն: ՎԼՊ - Ազդակիր համայնքի ղեկավարություն՝ Պատվիրատուի (ՀՀԶԿ/ԾԻԳ) կողմից տրամադրվող ուսուցողական աջակցություն:

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<p>հողերը և ճանապարհները զբաղեցնում են բուժերային գոտու մոտ 4,33 հա-ն: Բացի այդ, տարածքից առնվազն 5,29 հա-ն պետք է հատկացվի գետային կենսամիջավայրի կառուցման համար (տե՛ս վերևում):</p> <p>Ըստ այդմ, բուժերային/պաշտպանիչ գոտում մտնում է 20,5 հա բնական (անտառային, մարգագետնային և ժայռային) կենսամիջավայր, որը կարող է պահպանվել Անտառային քնամուկի, ինչպես նաև մոդեսների ու օձերի առաջնահերթ տեսակների բնակեցման համար:</p> <p>Կենսամիջավայրերի կառուցման և պահպանման վերաբերյալ առաջարկությունները, ներառյալ բազմապատկիչները, պետք է մշակվեն Կենսաբազմազանության միջոցառումների պլանում (ԿՄՊ):</p>			
Թռչունների տեսակների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	<p>Թռչուններ</p> <p>1) Ներդնել/աջակցել արոտավայրերի կայուն կառավարմանը Լիճք համայնքում՝ մարգագետնային կենսամիջավայրի որակը բարելավելու, անողնաշարավորների քանակն ու բազմազանությունը մեծացնելու և Անտառային արտույտի, Ժուլանի ու Կարմրակտուլց ճայի համար անհրաժեշտ սննդի պաշարն ապահովելու նպատակով, ինչը</p>	Կենսաբազմազանության պահպանության բյուջեի շրջանակներում	Ծրագրի ազդեցությունը թռչունների վրա կանխվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՄԱԻ - Մասնագիտացված կազմակերպություն ՎԱՊ - Ազդակիր համայնքի ղեկավարություն՝ Պատվիրատուի (ՀՀԶԿ/ԾԻԳ) կողմից տրամադրվող ուսուցողական աջակցություն

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		կնպաստի նրանց պոպուլյացիայի խտության հնարավոր աճին, 2) Պահպանել լայնատերև անտառների վերականգնված հատվածները շահագործման առնվազն առաջին երկու տարիների ընթացքում:			
Անողնաշարավորների պահպանություն	Ազդեցություն կենսաբազմազանության վրա (8.2.12)	Անողնաշարավորներ 1) Ներդնել/աջակցել արոտավայրերի կայուն կառավարմանը ջրամբարի տարածքին հարակից Լիճք համայնքում, ինչը կարող է բարելավել մարգագետնային կենսամիջավայրի որակը, 2) Պահպանել ստեղծված կենսամիջավայրերը՝ համալրված առաջնահերթ տեսակների համար կերային հանդիսացող բույսերով:	Կենսաբազմազանության պահպանության բյուջեի շրջանակներում:	Ծրագրի ազդեցությունը անողնաշարավորների վրա կանխվում, նվազեցվում, մեղմացվում կամ փոխհատուցվում է:	ՍԱԻ - Մասնագիտացված կազմակերպություն: ՎԱՊ - Ազդակիր համայնքի ղեկավարություն՝ Պատվիրատուի (ՀՀԶԿ/ԾԻԳ) կողմից տրամադրվող ուսուցողական աջակցություն:
Գյուղատնտեսական հողերի ոռոգում Լիճքի ջրամբարի ջրով: Ոռոգելի ջրի արդյունավետ օգտագործում:	Հանրային օբյեկտների և ենթակառուցվածքների վրա ազդեցություններ (8.3.2)	1) Ջրի օգտագործման արդյունավետությունը մեծացնել՝ ներդնելով ժամանակակից ոռոգման տեխնոլոգիաներ (օրինակ՝ կաթիլային համակարգեր), որոնք խթանվում են ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի № 1695-Լ որոշմամբ ²¹ , և գյուղացիների հետ հաղորդակցվել կաթիլային ոռոգման առավելությունների մասին, ներառյալ կառավարության կողմից		Հնարավորինս շատ կաթիլային ոռոգման համակարգեր են ներդրվում: Առաջնահերթություն է տրվում խոցելի խմբերի մասնակցությանը ջրօգտագործողների ընկերություններին կամ համայնքային որոշումների կայացմանը ոռոգման վերաբերյալ:	ԱՄԼԻ՝ Ազդակիր համայնք՝ Պատվիրատուի (ՀՀԶԿ/ԾԻԳ) և Օպերատորի կողմից ուսուցման աջակցությամբ: ՎԱՊ՝ Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):

²¹<https://www.arlis.am/hy/acts/168164>

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (Եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<p>ջրօգտագործման վճարների ֆինանսական փոխհատուցումը կաթիլային ոռոգման ներդրման դեպքում (պետք է կազմակերպվի ՀՀ ՋԿ-ի կողմից և աջակցվի համայնքների և տարածաշրջանային իշխանությունների կողմից),</p> <p>2) Խրախուսել համայնքի մասնակցությունը ջրօգտագործողների ընկերություններին՝ ոռոգման ծառայությունների կառավարումը, պահպանումը և արդար հասանելիությունը բարելավելու համար:</p>			
Լիճքի ջրամբարի շահագործում:		<p>3) Անցկացնել մուտքի ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի և թափոնների հեռացման համակարգերի կանոնավոր ստուգումներ և սպասարկում՝ ենթակառուցվածքների լարվածությունը կանխատեսելու և վերացնելու համար,</p> <p>4) Պահպանել պատվարի, ջրթափերը և արտահոսքի կառույցները՝ ջրի վերահսկվող արտահոսքերն ապահովելու և հոսանքն ի վար ջրհեղեղներից խուսափելու համար, որոնք կարող են վնասել հանրային ենթակառուցվածքները:</p>	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Ջրամատակարարման ենթակառուցվածք:	Ի՝ Պատվիրատու (ՀՀՋԿ/ԾԻԳ) և օպերատոր: ՎԼՊ՝ Պատվիրատու (ՀՀՋԿ/ԾԻԳ):

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիտարկվում է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		<i>Տես նաև բաժիններ 8.3.5 և 8.4-ում առաջարկվող միջոցառումները:</i>			
Շահառուների ներգրավման գործընթացը, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում աշխատակիցների վարձումը և վարձատրությունը:	Ազդեցություն խոցելի խմբերի վրա (8.3.4)	<p>1) Ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար կիրառել սուբսիդիաներ կամ նվազեցված վճարներ՝ ոռոգման ջրի կամ ջրամբարի հետ կապված ծառայությունների հասանելիության համար,</p> <p>2) Ապահովել ջրի թափանցիկ և արդար բաշխումը բոլոր ֆերմերներին՝ առաջնահերթություն տալով անապահով օգտատերերին,</p> <p>3) Ապահովել, որ արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանները հստակորեն հաշվի առնեն խոցելի խմբերը, ներառյալ ջրհեղեղների կամ պատվարի ջրահեռացման ժամանակ նշանակված տարիանման ուղիները և օգնությունը,</p> <p>Առաջնահերթություն տալ խոցելի խմբերի մասնակցությանը ջրօգտագործողների ընկերություններին կամ համայնքային որոշումների կայացմանը՝ ոռոգման գրաֆիկների և ջրամբարի կառավարման վերաբերյալ:</p>	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	խոցելի խմբերի մասնակցությունը ջրօգտագործողների ընկերությունում կամ ոռոգման վերաբերյալ համայնքային որոշումները առաջնահերթ են:	ՄԱԻ - ՋՕԸ և օպերատոր: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):
Նյութերի, նավթամթերքների և աշխատողների տեղափոխում:	Հանրային առողջության և անվտանգության վրա ազդեցությունը (8.3.5)	1) Հսկել ջրամբարի տեխնիկական վիճակը, ապահովել ժամանակին սպասարկում,	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Շահագործման փուլում ԵԿՊ-ն և ԱԻՊԱՊ-ն իրականացվում են:	ՄԱԻ - Օպերատոր: ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ)

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (Եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
Լիճքի ջրամբարի շահագործում և սպասարկում:		<p>2) Անցկացնել համայնքային իրազեկման արշավներ խեղդվելու ռիսկերի վերաբերյալ, մասնավորապես՝ ուղղված երեխաներին,</p> <p>3) Եթե սպասարկման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է ծանր տեխնիկա կամ մեծ թվով տրանսպորտային միջոցներ, պետք է մշակվի երթևեկության կառավարման պլան՝ հաշվի առնելով վերը նշված առաջարկությունը,</p> <p>4) Ջրամբարի շահագործման համար վարձված աշխատակիցների համար անցկացնել մասնագիտական վերապատրաստում՝ կենտրոնանալով նրանց հիմնական դերերի և պարտականությունների վրա,</p> <p>5) Մշակել և իրականացնել Արտակարգ Իրավիճակներին Պատրաստվածության և Արձագանքման Պլան (ԱԻՊԱՊ) շահագործման փուլի համար (տես կետ 8.4):</p>			
Լիճքի ջրամբարի շահագործում և սպասարկում	Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում (8.3.6)	1) Մշակել ԱՎԱՊ ընթացակարգեր/ իրահանգներ՝ սպասարկման և վերանորոգման աշխատանքների համար,	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	ԱՎԱՊ ընթացակարգերը պատրաստված են և իրականացվում են: Օպերատորի	ՄԱԻ - Օպերատոր: Վ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ): Պ - Առողջապահության և

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		2) Հետևել համապատասխան ազգային ԱԱԱՊ օրենսդրության պահանջներին:		գործունեությունը համահունչ է ազգային ԱԱԱՊ պահանջներին:	աշխատանքի տեսչական մարմին:
Աշխատուժի և աշխատանքային պայմանների հետ կապված գործունեություն, ներառյալ ջրամբարի շահագործման անձնակազմի կառավարումը:	Աշխատողների իրավունքների և աշխատանքային պայմանների հետ կապված ազդեցություններ (8.3.7)	1) Ապահովել բոլոր աշխատողների համար աշխատանքային պայմանագրեր, որոնցում նշված կլինեն աշխատավարձերը, դերերը և աշխատանքի տևողությունը, 2) Կիրառել կանոնակարգված աշխատանքային ժամեր՝ համարժեք ընդմիջումներով և հանգստի ժամանակահատվածներով, 3) Ստեղծել թափանցիկ բողոքարկման մեխանիզմներ բոլոր աշխատակիցների համար, 4) Խթանել գենդերային հավասարությունը և հաշմանդամություն ունեցող անձանց ներառականությունը աշխատանքի ընդունման, վերապատրաստման և առաջխաղացման գործընթացներում, 5) Կազմակերպել գործառնական ընթացակարգերի, անվտանգության և հմտությունների զարգացման վերաբերյալ կանոնավոր վերապատրաստումներ:	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Համապատասխանություն կիրառելի ազգային օրենսդրության, ՎՁԵԲ-ի ԻՊ2 չափանիշների և ՄԼԳ պահանջների հետ, որոնք վերաբերում են աշխատուժին և աշխատանքային պայմաններին:	ՄԱԻ - Օպերատոր կամ սպասարկող կապալառու: Վ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ): Պ - Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին:
Աշխատողների և ազդեցության տակ գտնվող բնակավայրերի	Գենդերային բռնություն և ոտնձգություն (8.3.8)	1) Ծրագրի ավարտից հետո մշտադիտարկման ենթարկել	Օպերատորի բյուջեի շրջանակներում:	Արդյունավետ բողոքարկման մեխանիզմը, ներառյալ	ՄԱԻ - Օպերատոր և ԶՕԸ:

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
բնակիչների միջև փոխգործակցություն		ռոզման ենթակառուցվածքներին հասանելիությունը, 2) Ծրագրի շահագործման ընթացքում պահպանել բողոքարկման մեխանիզմը, ներառյալ ԳԲՈ դեպքերը:		ԳԲՈ-ի հետ կապված դեպքերի հասցեագրման դրույթները, ներդրված են և կիրառվում են:	ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ):
Լիճքի ջրամբարի շահագործում	Արտակարգ իրավիճակներ և արձագանք (8.4)	1) Կատարել դարպասների, փականների և պոմպերի կանխարգելիչ սպասարկում և ապահովել, որ անձնակազմը վերապատրաստված լինի արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար, 2) Պաշտպանել աշխատողներին՝ ապահովելով անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը, սահմանափակ տարածքներ մուտք գործելու արձանագրությունները և էլեկտրական և մեխանիկական վտանգների վերաբերյալ անվտանգության ուսուցումը, 3) Մշակել և իրականացնել Արտակարգ Իրավիճակների Պատրաստվածության և Արձագանքման Պլան, որը ներառում է վաղ նախագգուշացման համակարգեր, տարհանման երթուղիներ և պարբերական վարժանքներ տեղական իշխանությունների և համայնքների հետ (ինչպես	Օպերատորի բյուջեի շրջանակներում	Իրականացվել է պատվարի ամբողջականության ռիսկի գնահատում: Բոլոր անհրաժեշտ նախագգուշացման համակարգերն ու սարքավորումները տեղադրված են և սպասարկվում են	ԻԱՇ - Օպերատոր ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ, ԾԻԳ)

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Լիճքի ջրամբարի կառուցման ՇՄՍԱԳ

ԲՍԿՊ

Rev02

Գործունեության տեսակը	Սպասվող ազդեցություններ	Մեղմացնող միջոցառումներ	Արժեքը (եթե դիսկրետ է և կարող է ներառվել բյուջեի մեջ)	Թիրախ / Ցուցանիշ	Պատասխանատու / վերահսկող կառույցներ ²⁰
		անձնակազմի, այնպես էլ տեղի բնակիչների համար), 4) Մշակել և իրականացնել շահագործման և սպասարկման պլան:			
Ազդակիր բնակավայրերի ավանդական և մշակութային ինքնությունը ներկայացնող ծեսերի, արարողությունների, տոնակատարությունների և մշակութային ժառանգության արժեքների խթանում, Մեղրի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացում	Ազդեցություն ոչ նյութական մշակութային ժառանգության վրա (8.5.2)	Խորհրդատվություններ անցկացնել Մեղրիի համայնքապետարանի ներկայացուցիչների, Լիճք, Վարդանիձոր, Տաշտուն, Վանք, Կալեր և Կարճևան գյուղերի վարչական ղեկավարների, ինչպես նաև տեղական մշակութային ՀԿ-ների, զբոսաշրջային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Այս խորհրդակցությունները պետք է կենտրոնանան Մեղրի համայնքում զբոսաշրջային երթուղիների մշակման վրա, որոնք կներառեն մշակութային ժառանգության վայրեր այցելություններ՝ Լիճքի ջրամբարի տեսանելիությունն ու գրավչությունը օգտագործելով այցելություններ ներգրավելու համար:	5,000 EUR	Կազմակերպվում և իրականացվում են Մեղրի համայնքի ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքները խթանող միջոցառումներ:	ՄԱԻ - Մասնագիտացված ընկերություն (օրինակ՝ մշակութային ՀԿ): ՎԱՊ - Պատվիրատու (ՀՀԶԿ/ԾԻԳ), ՎՁԵԲ: